Հեքիաթային ճամփորդություն

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)
Հ 572

Հեքիաթային ճամփորդություն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2020.- 96 էջ:

Հ 572

Ժողովածուում ընգրկված այս հեքիաթների հերոսները ճամփորդում են հեքիաթների զարմանահրաշ աշխարհում, որտեղ անցնելով բազմաթիվ փորձությունների միջով՝ ձեռք են բերում կյանքի մեծ փորձառություն և, ի վերջո, հասնում իրենց նպատակներին: Ընթերցողը ոչ միայն դառնում է այս յուրօրինակ հեքիաթային ճանապարհորդության ականատեսը, այլ նաև ակտիվ մասնակիցը:

ՀՏԴ 398.21
ԳՄԴ 82.3(0)

ISBN 978-9939-75-502-1
© Էդիթ Պրինտ, 2020

Ոսկի խաղաֆը

Ժուկով ժամանակով Հնդկաստանի Բենարես քաղաքում տիրելիս է լինում Ուքանա թագավորը: Օրերից մի օր մեռնում է նրա սիրելի կինը: Դժբախտ թագավորը չի կարողանում մխիթարվի ոչ մի բանով, իրեն որսորդության է տալի: Մի անգամ էլ, երբ որսի է դուրս գալի, անտառում մի գեղեցիկ փոքրիկ աղջիկ է գտնում: Ուրախանում, աշխարհքով մին է լինում, առնում տուն է բերում, որդեգրում, անունը դնում Քանաքարա:

Մեծանում է Քանաքարան, դառնում է տխուր թագավորի միակ մխիթարանքը: Երբ հասնում է ամուսնության ժամանակը, թագավորը հրավիրում-հավաքում է իր երկրի երիտասարդ արքայազուններին ու իշխանազուններին, որ նրանց միջից ընտրություն անի Քանաքարան: Բայց աղջիկը դուրս չի գալի իր սենյակից:

– Հայրիկ,– ասում է,– գիշերս մորս հոգին երազ եկավ ինձ: Ասավ. «Քանաքարա, շատ-շատերը կխնդրեն քու ձեռքը, չխաբվես ոչ գեղեցկության, ոչ քաջության, ոչ հարստության, որովհետև անբախտ կլինիս, որին էլ ընտրես քեզ ամուսին, ընտրի միայն նրան, որ իր կյանքում գոնե մի անգամ եղած կլինի Ոսկի քաղաքում»:

– Շա՛տ լավ, աղջիկս,– ասում է բարի ծերունին,– իմաստուն են երազները, ու մորդ հոգին քու երջանկության համար է խոսում: Ես էդպես էլ կհայտնեմ հավաքված փեսացուներին, ինչպես ազդել է երազը, ու ինչպես քու սիրտն է ուզում: Նրանք աշխարհք տեսած մարդիկ են, և, անշուշտ, նրանց մեջ կգտնվեն էնպեսները, որ իրենց կյանքում գոնե մի անգամ եղած են Ոսկի քաղաքում:

Էսպես էլ հայտնում է թագավորը հավաքված արքայազուն-ներին ու իշխանազուններին: Երբ Ոսկի քաղաքի անունը լսում են, ամենքը նայում են իրար երեսի ու զարմանքով վեր են քաշում ուսները:

– Էդպես քաղաք մենք չենք էլ լսել մեր օրում, ուր թե տեսել...

Նստում են ձիանքը ու իրար ետևից հեռանում, ցրվում իրենց աշխարհքները:

Բենարեսում մի երիտասարդ է լինում՝ Դիվանա անունով: Մի շռայլ, զվարճասեր երիտասարդ է լինում Դիվանան, իր կարողությունը խնջույքներում ու քեֆերում վատնած, դատարկ, ձանձրացած կյանքից ու աշխարհքից: Հենց որ թագավորի աղջկա որոշումը լսում է, մտածում է. «Ա՛յ քեզ լավ դեպք՝ աշխարհքում մի քիչ էլ զվարճանալու, միանգամից և՛ կհարստանաս, և՛ գեղեցիկ կին կունենաս: Եվ ինչպե՞ս ոչ ոքի մտքով չի անցել գնա ասի՝ տեսել է Ոսկի քաղաքը ու ամուսնանա հետը»:

Վեր է կենում, շիտակ գնում Ուքանա թագավորի պալատը:

– Հայտնեցեք չքնաղ Քանաքարային, որ ես՝ երիտասարդ Դիվանաս, եղել եմ Ոսկի քաղաքում:

Ամբողջ պալատը թնդում է ցնծությունից, վերջապես եկավ սպասված հերոսը:

– Ներս համեցեք,– խնդրում են դրանիկները ու ներս են տանում երիտասարդին գեղեցիկ Քանաքարայի մոտ: Քանաքարան խնդրում է նրան, որ պատմի, թե ինչ բան է Ոսկի քաղաքը: Ու Դիվանան սկսում է իր սուտ պատմությունը.

– Ոսկի քաղաքը...էլ մի՛ ասի, տիրուհի, թե ինչ զարմանալի բան է էդ Ոսկի քաղաքը, որ ես ընկա մեջը... Առևտրական գործերով անցնում էի աշխարհքից աշխարհ, հազար ու մի աշխարհ ընկա, հազար ու մի քաղաք տեսա՝ հազար ու մի հրաշալիքներով լիքը... Մի անգամ էլ, մի աշխարհքում, որի անունը լեզվիս ծերին է և հիմի կասեմ որտեղ որ է, տեսնեմ հեռվում մի ահագին տարածություն վառվում է արևի տակ, ինչպես մի հսկայական հրդեհ:

– Էս ի՞նչ հրաշք է,– հարցնում եմ ընկերներիս:

– Ոսկի քաղաքն է,– ասում են ինձ:

– Ճշմարիտ որ Ոսկի քաղաք... Մոտենում ենք, ի՞նչ տեսնենք՝ տները՝ ոսկի, ծառերը՝ ոսկի, փողոցները՝ ոսկի... Մարդիկ էլ ո՛չ աշխատում են, ո՛չ չարչարվում են, նստած ուտում-խմում են...

– Դո՛ւրս արեք էս անամոթ ստախոսին,– բարկացած կանչում է Քանաքարան:

Վզին տալով դուրս են անում երիտասարդ Դիվանային, և պալատը նորից ընկղմվում է տխրության մեջ...

Բայց էն օրվանից, ինչ երիտասարդ Դիվանան տեսնում է գեղեցիկ Քանաքարային, սիրահարվում, փոխվում, դառնում է

բոլորովին ուրիշ մարդ: Քունը փախչում է նրա աչքերից, գիշերցերեկ միայն էն է մտածում, որ գնա՛, գնա՛, գնա՛, գտնի Ոսկի քաղաքը, ուր ուզում է լինի, ու գա պատմի Քանաքարային: Թողնում է տունուտեղ, հերն ու մեր, գլուխը փեշն է դնում, գնում. որտեղ ես, Ոսկի քաղաք, քեզ եմ գալի: Գնում է, գնում, ամեն պատահողի հարցուփորձ է անում, ոչով չի էլ լսել Ոսկի քաղաքի անունը, ուր մնաց թե տեղն ասեր:

Մի օր էլ Դիվանան հոգնած, տխուր անց է կենում մի խոր անտառով: Տեսնում է մի ծառի վրա նստած մի մեծ արծիվ: Նետն ու աղեղը պատրաստում է, որ զարկի, մին էլ, Աստծու հրամանով, արծիվը լեզու է առնում, ասում.

– Ինչո՞ւ ես ինձ սպանում, ո՛վ բարի մարդ, առանց էն էլ վիրավորված եմ ես: Որսկանի նետը մտել է թևիս տակը, անտանելի ցավ է տալի ու արյունքամ է անում ինձ: Եթե գթաս, նետը հանես ու առողջացնես ինձ, ես քեզ էն լավությունը կանեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել:

Զարմանում է երիտասարդ Դիվանան, թե ինչպես է անլեզու հավքը խոսում մարդկային լեզվով, ապա ուշաբերվելով մոտ է գնում, ծառիցը վեր է բերում վիրավոր արծվին. նետը հանում է թևի տակից ու տանում անտառում մի խրճիթ, սկսում է բժշկել:

Արծիվը առողջանում է ու դիմում է Դիվանային.

– Ես խոսք տվի, որ քեզ էն լավությունը կանեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել: Խոսք եմ տվել, ու խոսքս խոսք է, պետք է կատարեմ, ինչ էլ որ սիրտդ ուզի, լեզուդ ասի: Ասա տեսնեմ՝ ի՞նչ ես ուզում:

Ու նստում է երիտասարդը, պատմում արծվին իր պատմությունը, աղաչում, որ իրեն տանի Ոսկի քաղաքը:

– Դժար բան ուզեցիր, բայց արծվի համար չի դժարը:

Դու միայն ամուր կաց իմ մեջքին, դեռ ճրագները չվառած քեզ վեր կբերեմ Ոսկի քաղաքում,– ասում է արծիվը ու վեր թռցնում երիտասարդին:

Բաց է անում իր հսկայական թևերը, բարձրանում է մինչև ամպերը, սլանում հեռու, դեպի արևելուս: Երկյուղից ու արագությունից գրեթե շնչասպառ է լինում, ուշքից գնում է Դիվանան: Մին էլ էնտեղ է ուշքի գալի, որ արծիվը ծղրտում է.

– Ահա Ոսկի քաղաքը,– ու իջեցնում է գետին:

Աչքը բաց է անում Դիվանան: Առջևը, կանաչ այգիների մեջ թաղված, տարածվում է մի քաղաք: Կապույտ գետը ոլորվելով անցնում է նրա միջից: Հեռվից շատ ծանոթ քաղաքների նման մի քաղաք և էն էլ՝ փոքրիկ քաղաք: Առաջ է գնում: Չորս կողմը բարելից այգիներ, զմրուխտ կանաչ, հազար գույնի ծաղիկներ: Օդը լիքն է թարմությունով ու բուրմունքով, թռչունների ծլվլոցով ու ջրերի կարկաչով, և նրանց հետ միախառնվելով հնչում են մարգերում ու այգիներում աշխատողների երգերը.

Ա՜խ, ինչ լեն է աշխարհքն ազատ
Էս կյանքի համար, ամենքի համար.
Ինչքա՛ն լիքն է, ինչքա՛ն առատ
Էս կյանքի համար, ամենքի համար:
Ա՛խ, ինչ լավն է աշխատանքը,
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ինչ անուշ է հոսում կյանքը,
Լիքը սիրով, ծաղկով, երգով:

«Երջանիկ մարդիկ»,– մտածում է Դիվանան ու դիմում է նրանց.

– Ասացեք, աղաչում եմ, ո՞վ երջանիկ մարդիկ, ի՞նչ է էս քաղաքի անունը:

– Ոսկի քաղաքն է սա, բարի օտարական:

– Իսկ դուք ծառանե՞ր եք, որ բանում եք ձեր տերերի այգիներում, թե՞...

– Մենք տեր ու ծառա չգիտենք:

– Իսկ ձեզ ո՞վ է կառավարում:

– Գոհար թագուհին:

– Շատ զորեղ թագուհի է երևի:

– Այո՛, նա գիտի երջանկացնելու գաղտնիքը:

– Արդյոք կարելի՞ է նրան տեսնել:

– Նրա դուռը բաց է ամենքի առջև, իսկ օտարականներին միշտ նրա մոտ են տանում և քեզ էլ կհրավիրեն, անշուշտ:

Ճշմարիտ որ, ներս է մտնում քաղաքը թե չէ, Դիվանային խնդրում են Գոհար թագուհու ապարանքը: Ապարանքում, երբ կերակրվում է, կազդուրվում ու հանգստանում, հրավիրում են թագուհու մոտ: Թագուհին մի շատ բարի ու ազնիվ կին է լինում և էնքան չքնաղ, որ հրեղեն-փարեղեն մի արարած է թվում Դիվանային: Կախարդ որ կախարդ, հենց մի տեսնելով կախարդում է նրան:

– Ի՞նչն է քեզ բերել մեր աշխարհը, երիտասարդ օտարական,– հարցմունք է անում Դիվանային.– վի՞շտն է քեզ հալածում, թե՞ բախտն է առաջնորդում, և ինչո՞վ կարող ենք օգտակար լինել քեզ:

Թագուհու ազնվությունից ու հարցմունքից ոգևորված՝ Դիվանան սրտաբաց պատմում է մի առ մի, թե ով է ինքը, ինչ է եկել իր գլուխը, ու ինչպես է հասել Ոսկի քաղաքը:

– Միշտ լավ է,– ասում է թագուհին,– երբ մարդիկ թողնում են իրենց վատ սովորություններն ու կրքերը, լցվում են վեհ կարոտով ու ձգտում են, գնում են հասնելու մի բարձր նպատակի:

Թե կհասնեն՝ լավ, թե չեն հասնի՝ դարձյալ միշտ լավ է ու լավ, որովհետև կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ձգտումն ու ճանապարհ:

– Իսկ երջանկությո՞ւնը...

– Աշխատել լավ ճանապարհի վրա ու գոհ լինել իր ունեցածով:

– Էդ է երջանկությունը:

– Ուրիշ ոչինչ:

– Իսկ ես կարծում էի՝ ձեր քաղաքը լիքն է ոսկով, և նրանից է, որ գոհ ու երջանիկ են ձեր մարդիկ,– հայտնում է զարմացած Դիվանան:

– Ոսկի՞,– քմծիծաղ է տալիս Գոհար թագուհին,– ոսկին մետաղ է, որ հողից է դուրս գալի, երջանկությունը զգացմունք է, որ սրտի՛ց է բխում: Ի՞նչ կապ կա նրանց մեջ:

– Իսկ ես կարծում էի՝ ահռելի բանակ ունեք ու զենքի ուժով եք պահպանում ձեր երկրի սքանչելի կարգն և խաղաղությունը,- շարունակում է Դիվանան:

– Օ՛, երբեք: Ահն ու սպառնալիքը և խաղաղությունը իրար չեն տեսել և միասին չեն ապրում:

– Իսկ ես կարծում էի, թե դուք հազարավոր ոսկեգմբեթ տաճարներ ունեք, նրանց մեջ անդադար աղոթում են ձեր հոգևոր հայրերը ու Աստծու աչքը քաղցր են պահում ձեզ վրա:

– Ո՛չ, բարեկամ, մենք բնության ընդարձակության մեջ ենք պաշտում նրան և միջնորդներ չենք ճանաչում մեր հոգու ու նրա մեջ:

– Սքանչելի՜ երկիր,– բացականչում է Դիվանան, հիշում է իր հայրենի երկիրն ու ընկնում է մտքի տունը:

Ապա տանում է կախարդ թագուհին, ման է ածում Դիվանային իր ապարանքի սրահները: Սրահներից մեկում Դիվանան տեսնում է պատիցը կախած մի աղջկա պատկեր:

– Վա՜հ, ինչքա՛ն նման է,– բացականչում է ու մնում առաջը քարացած:

– Ո՞ւմ նման է:

– Նրա…

– Ո՞վ է նա:

– Քանաքարան… իմ Քանաքարան…

– Բայց ո՞վ է Քանաքարան:

– Քանաքարան, թագուհի, հենց էն աղջիկն է, որի մասին քեզ պատմեցի: Նրա համար եմ ես հեռացել իմ հայրենի երկրից, ընկել աշխարհքից աշխարհ ու արծվի թևով հասել Ոսկի քաղաքը և կրկին էլ պետք է վերադառնամ նրա մոտ:

– Ինչո՞ւ ես վերադառնում, ազնիվ Դիվանա,– խոսում է գեղեցիկ թագուհին:– Մի՛ վերադառնա, Դիվանա, մեզ մոտ մնա, մեզ հետ ապրի: Մի՞թե ավելի փարթամ չէ Ոսկի քաղաքը, մի՞թե հոյակապ չեն էս ապարանքները, մի՞թե հրաշալի չեն էս կախարդական այգիները…

– Ո՛չ, թագուհի, չեմ կարող:

– Մի՞թե գեղեցիկ չեմ ես…

– Ո՛չ, չի լինելու, որ չի լինելու:

Էն ժամանակ թագուհին պատվիրում է, նավ են պատրաստում, ու ճանապարհ է դնում Դիվանային դեպի իր հայրենի երկիրը, դեպի Քանաքարան:

Ճանապարհին ծովում սաստիկ ալեկոծություն է վեր կենում, նավը ձգում է մի կղզի: Մի կանաչ կղզի՝ լիքն ամեն բարիքով ու ամեն գեղեցկությունով: Բայց ամենից գեղեցիկը լինում է նրա ջահել տիրուհին, որ Դիվանային առաջարկում է՝ ամուսնանա իր հետ, թագավորի էն ազատ ու առատ աշխարհում:

– Չեմ կարող, նազելի՛ տիրուհի,– հրաժարվում է Դիվանան:– Ես դարձյալ իմ ճանապարհն եմ շարունակելու, ինչ ուզում է լինի՝ դեպի իմ հայրենի տունը, դեպի իմ Քանաքարան, որ չեմ փոխելու ոչ ոքի և ոչ մի թագավորության հետ:

Էս ասելու հետ հենց աչքը ճպում է Դիվանան, մին էլ բաց է անում, կղզում տիրուհու փոխարեն առաջը կանգնած է Գոհար թագուհին:

– Մի՛ վախենար, Դիվանա, ու մի՛ զարմանա,– անուշ ժպտալով խոսում է նա:– Տեսնո՞ւմ ես, Ոսկի քաղաքի թագուհին եմ ես, կախարդ Գոհարը: Ես ոգի եմ: Իմ աղջիկն է Քանաքարան: Մանուկ հասակում Սև դևը նրան հափշտակեց ու տարավ: Էն օրվանից ամեն եկվորի ինձ մոտ էի հրավիրում, հարցուփորձ էի անում, պատկերն էի ցույց տալիս, բայց ոչ ոք չէր իմանում, թե ուր է ընկել նա: Եվ ահա դու եկար նրա սիրով ոգևորված ու վերադառնում ես կրկին նրա մոտ: Քո սերը փորձելու համար էր, որ ես քեզ արի էն ամեն առաջարկներն իմ քաղաքում: Եվ դարձյալ քեզ փորձելու համար էր՝ ես առա ուրիշ կերպարանք, քեզ փորձելու համար ստեղծեցի էս փորձանքն ու էս վայելչությունները, որ լոկ երևույթ են միայն: Այժմ ես հավատում եմ քեզ, հավատում եմ քո սերին ու քո բարությանը: Դու, հիրավի, այժմ երջանիկ կանես և՛ իմ Քանաքարային, և՛ ամեն մարդու: Վերջապես, այժմ դու գիտես երջանկության գաղտնիքը:

Էս խոսքի հետ մի փետուր է կրակում կախարդ թագուհին և, սև ամպի նման, հակնթավոր թևերը փռած, հայտնվում է մի մեծ արծիվ:

– Տա՛ր,– բացականչում է կինը, ու ամեն բան չքացնում Դիվանայի աչքից, այնինչ օդի մեջ հնչում է երգը:

Գոհ աշխարհքից, գոհ իր կյանքից,
Սիմուրղ հավքի զմրուխտ թևին,
Երջանկության հայրենիքից
Գնում է նա, գնում կրկին:
Գնում է նա վերածնված
Մաքուր սիրով, բարի սրտով,

Դեպի երկիրն իր նախահարց,
Ցավերի փուն, արցունքի ծով:
Տանում է նա ուժը ոգու,
Անվերջ սերը, անհատ բարին,
Երջանկությունն ամեն մարդու,
Խաղաղություն ողջ աշխարհին:

Հոգու վրա է լինում Ուքանա թագավորը, որ արծիվը ծղրտում ու վեր է դնում Դիվանային իր հայրենի քաղաքի սահմանում: Քաղաքն է մտնում Դիվանան և գնում ուղիղ թագավորի ապարանքը:

– Հայտնեցեք գեղեցիկ Քանաքարային, որ ես՝ երիտասարդ Դիվանան, գալիս եմ Ոսկի քաղաքից:

Ընդունում են ներս: Դեմքը տեսնելուն պես Քանաքարան բարկանում է իր ծառաների վրա:

– Մի՞թե չեք ճանաչում սրան, որ ներս եք թողել նորից: Մի՞թե էն սրիկան չի սա, որ մի անգամ փորձեց ինձ խաբի և ահա նորից հանդգնում է, ուզում է հին խաղը խաղա: Դո՛ւրս արեք իսկույն:

– Սպասի՛, չքնաղ Քանաքարա,– խնդրում է Դիվանան:– Հիրավի, ես նա էի, բայց էլ նա չեմ: Ես այժմ Ոսկի քաղաքիցն եմ գալի, քո կախարդ մոր՝ Գոհար թագուհու ապարանքիցն եմ վերադառնում, քո մանկության ննջարանումն եմ եղել, ուր դեռ կախ է արած քո սիրուն պատկերը... Ես այժմ գիտեմ՝ ինչ բան է Ոսկի քաղաքը, ինչ է ոսկին, և ինչ է երջանկությունը: Ես այժմ գիտեմ երջանկության գաղտնիքը:– Եվ ամեն բան նստում պատմում է մի առ մի:

– Այժմ ես քոնն եմ,– բացականչում է Քանաքարան և աշխարհքով մին է լինում ուրախությունից: Ուքանա թագավորն էլ շնչի է գալի. օխտն օր, օխտը գիշեր ամբողջ երկիրը կատարում է նրանց

հարսանիքը: Ամենքն ուրախանում են ու լիանում: Էս ուրախությունը տեսնելուց հետո ծեր թագավորն էլ կյանքն ու արևը բաշխում է ապրողներին ու մեռնում: Նրա տեղը թագավոր է նստում Դիվանան և սկսում է իր երկիրը կառավարել էն կարգով, ինչ որ տեսել էր Ոսկի քաղաքում: Ոսկի չկար նրա երկրում, բայց մարդիկ ապրում էին արդար աշխատանքով, գոհ ու երջանիկ իրենց ունեցածով: Եվ էն ժողովուրդը, որ մի ժամանակ տրտնջում էր, թե աշխարհքը նեղ է ու ցավով լիքը, հիմա երգում էր ամեն տեղ.

Ինչքան լեն է աշխարհքն ազատ
Էս կյանքի համար, ամենքի համար.
Ինչքան լիքն է, ինչքան առատ
Էս կյանքի համար, ամենքի համար:
Ինչ ազնիվ է աշխատանքը,
Առողջ ձեռքով, խաղաղ հոգով,
Ինչ թեթև է անցնում կյանքը,
Լիքը սիրով, ուրախ երգով:

Խոզարածը

Կար–չկար՝ մի թագավոր կար: Շատ զորեղ թագավոր էր ու շատ սիրում էր որսի գնալ: Մի օր որսի ժամանակ անտառում երկար դեսուդեն գնաց, մինչև մի զարմանալի ջանավար[1] տեսավ, որն արեգակի պես շողշողում էր: Թագավորը հրամայեց վեզիրին.

– Մի հնար գտի՛ր՝ բռնենք, ոչ թե սպանենք, ափսոս է:

Թակարդ դրեցին, ջանավարին բռնեցին, բերեցին պալատ: Թագավորը հրամայեց, որ ապակեպատ սենյակ սարքեն, դրան դնեն մեջը, որ եկողը նայի, հիանա: Սենյակը սարքեցին, կենդանուն մտցրին ներս, ու բոլորը եկան տեսնելու: Տեսնողն արմանում–զարմանում էր:

Թագավորն ուներ մի մինուճար որդի: Երբ տղան դարձավ տասներեք տարեկան, նա էլ հոր պես նետուաղեղն առնում, գնում էր որսի: Մի օր, ինչպես եղավ, նրա նետը դիպավ ապակուն ու կոտրելով այն՝ ընկավ ջանավարի առաջ: Տղան շատ խնդրեց

[1] Գազան

ջանավարին, որ տա իր նետը: Ջանավարն ասաց.

– Գնա՛, հորդ բարձի տակից էս սենյակի բանալիները հանիր բե՛ր, համ նետդ վերցրու, համ էլ ինձ ազատ արձակիր՝ գնամ, մեղք եմ: Ես քո լավության տակից դուրս կգամ:

– Բա որ իմ հերն ինձ սպանի՛,– վախեցավ տղան:

– Չի սպանի,– ասաց ջանավարը,– դու մինուճար տղա ես:

Տղան գնաց, հոր բարձի տակից բանալիները հանեց բերեց, դուռը բացեց: Ջանավարն ասաց.

– Թե որ հերդ քեզ նեղացնի, արի ինձ գտի՛ր. ես անտառում՝ աղբյուրի մոտ եմ մնում:

Ասաց ու փախավ գնաց: Երբ հայրն իմացավ, որ տղան ջանավարին ազատ է արձակել, ասաց.

– Գլուխը կտրե՛ք:

Նազիրն ու վեզիրը շատ խնդրեցին, թե՝ թագավորն ապրած կենա, դու ես ու մինուճար մի տղադ: Մի կենդանու համար որդուդ ինչո՞ւ ես սպանում: Տնից դո՛ւրս արա, թող գնա:

Թագավորը կանչեց վեզիրի տղային, որպես ճամփի ծախս շատ փող տվեց նրան ու ասաց.

– Ա՛ռ, էս տղին հետդ տա՛ր. կսպանես՝ դու գիտես, ողջ կթողնես՝ դու գիտես: Էլ իմ երկիրը ոտք չդնի:

Վեզիրի տղան թագավորի տղայի հետ ճամփա ընկավ:

Շատ գնացին թե քիչ՝ հասան անտառ: Վեզիրի տղան ասաց.

– Քեզ պիտի սպանեմ էստեղ:

Թագավորի տղան շատ լաց եղավ, խնդրեց, որ չսպանի: Վեզիրի տղան ասաց.

– Թևիդ բազպանը տո՛ւր՝ չեմ սպանի:

– Ա՛ռ,– ասաց թագավորի տղան,– բազպանը չեմ ուզում, քե՛զ լինի:

Երբ որ վեզիրի տղան բազպանը վերցրեց, ասաց.

– Էսօրվանից թագավորի տղեն ես եմ, իսկ դու՝ իմ ծառան:

– Ծառադ եմ, ծառադ եմ, ճարս ինչ:

Վեզիրի տղան ծառի տակ քնեց: Թագավորի տղան գնաց ման գալու: Քայլելով հասավ աղբյուրին, տեսավ՝ ջանավարն էդտեղ նստած է: Տղան լաց եղավ, իր գլխի եկածը պատմեց ջանավարին:

– Բան չկա,– ասաց ջանավարը,– ես էնպես կանեմ, որ դու շատ լավ կապրես: Գնա՛, էդ աղբրի ջրիցը խմի՛:

Տղան գնաց խմեց:

– Մի էդ ծառը թա՛փ տուր,– ասաց ջանավարը:

Տղան ծառը թափահարեց. ծառն արմատախիլ եղավ: Ջանավարն ասաց.

– Գնա՛, մե՛կ էլ ջուր խմի՛:

Խմեց եկավ: Ջանավարն ասաց.

– Էն մեծ ծառը թա՛փ տուր:

Մեծ ծառը թափահարեց. արմատախիլ եղավ:

– Էդ ուժը քեզ հերի՞ք է,– հարցրեց ջանավարը,– թե՞ էլի տամ:

– Չէ՛, մի քիչ էլ լինի՝ ավելի լավ,– պատասխանեց տղան:

– Գնա՛, էլի՛ ջուր խմի:

Տղան գնաց, մի քիչ էլ ջուր խմեց, եկավ, նախորդ ծառից երկու անգամ ավելի հաստաբուն մի ծառ էլ արմատախիլ արեց:

– Հիմա հերիք է, շնորհակալ եմ,– ասաց ու գնաց վեզիրի տղայի մոտ: Երբ վեզիրի տղան արթնացավ, երկուսով ճանապարհ ընկան: Շատ գնացին թե քիչ, հասան մի թագավորի քաղաք: Վեզիրի տղան լուր ուղարկեց պալատ, թե՝ ես էսինչ թագավորի որդին եմ, գալիս եմ տեսության:

Թագավորը մարդ ուղարկեց, պատվով ընդունեց հյուրին: Երկու տղան էլ թագավորին շատ դուր եկան, և նա ասաց.

– Ես իմ աղջկան պիտի քեզ տամ, դու իմ փեսան ես լինելու: Քո ծառայի՞ն ինչ գործ տամ:

– Դու գիտես, ինչ գործի կուզես՝ դի՛ր,– պատասխանեց վեզիրի տղան:

– Կգնա՞ս մեր խոզերը պահելու,– հարցրեց թագավորը մյուս տղային:

– Կգնամ:

Թագավորի՝ ծառա դարձած որդին գնաց խոզանոց: Էդտեղ մի գերան կար ընկած: Առավոտյան էդ գերանը ձեռնափայտի պես ձեռքն առավ ու խոզերը տարավ արածեցնելու: Երեկոյան եկավ, կանգնեց թագավորի առաջ ու ասաց.

– Ինձ համար մի կարգին էրկաթե դագանակ սարքել տուր:

– Էդ գերանը քեզ հերիք չի՞,– զարմացավ թագավորը:

– Չէ՛, սա ճիպոտ է, ինձ քսանհինգ փթանոց մի դագանակ է պետք:

Թագավորը խոստացավ, որ դագանակը սարքել կտա:

Առավոտ շուտ տղան եկավ ու ձեռքի գերանով դը՛մփ–դը՛մփ խփեց պալատի պատշգամբին:

– Հը՛, ի՞նչ է եղել,– դուրս եկավ թագավորը:

– Ինձ մի շահի՛[2] տվեք՝ պոպոք առնեմ,– ասաց տղան:

– Ա՛ռ մի մանեթ,– ասաց թագավորը:

– Չէ՛, ինձ մանեթ հարկավոր չի,– պատասխանեց խոզարածը,– մանեթը որտե՞ղ մանրեմ: Ինձ մի շահի տվե՛ք՝ գնամ:

Մի շահին տվեցին, վերցրեց ու մեկ էս խանութի, մեկ էն խանութի դուռը ջարդեց, որ բացեն՝ իր պոպոքն առնի գնա: Հաջորդ առավոտյան, երբ խոզարածն արթնացավ, որ խոզերը տանի արածեցնելու, տեսավ, որ իր երկաթե դագանակը պատրաստ դրած է դռան մոտ: Ձեռքն առավ, ծանրութեթև արեց, ասաց.

– Օհո՛, էս իմ ուզածն է, որ կա:

Դագանակը դրեց ուսին, խոզերն առաջը գցեց ու ճանապարհ

[2] Մանրադրամ

ընկավ: Խոզերը քշեց, տարավ Սև դևի սահմանը: Տեսավ՝ մի մեծ դարպաս:

«Կարող է՝ տուն կա էստեղ, գնամ տեսնեմ՝ ինչ կա»,– մտածեց:

Մոտեցավ, տեսավ դարպասը փակ է, դագանակով որ չտվեց, դռան կտորները թռան, կեսը՝ արևմուտք, կեսը՝ արևելք: Խոզերը ներս արեց, տեսավ մեծ այգի, մեջն էլ՝ ինչ սիրտդ ուզի, ամեն բարիք կա: Խոզերին բաց թողեց այգի, ինքը գնաց ծառի տակ քնեց:

Ճաշին Սև դևը եկավ, տեսավ դարպասը ջարդուփշուր եղած, խոզերն էլ, այգին տրորելով, քանդրտելով, գնում–գալիս են:

– Էս ո՞վ է, ինչացո՞ւ է, որ սիրտ է արել, էկել է էստեղ,– մտածեց Սև դևը: Գնաց, ման եկավ ու ծառի տակ տեսավ քնած տղային:

– Հողածի՛ն, հողածի՛ն,– ձայն տվեց դևը: Տղան ձայնը լսեց, բայց վեր չելավ տեղից:

– Ղուշն իր թևով, օձն իր պորտով սիրտ չէր անի էստեղ գալ: Էդ ո՞նց ես դու եկել,– ասաց դևը:

– Էնքան շնորհք չունես, որ սպասես արթնանամ, նոր կռիվ անես,– ասաց տղան:

– Մեծ կտորդ ականջդ եմ թողելու,– զայրացավ դևը,– հլա խոսում ե՞ս:

– Մի քիչ հեռու կանգնիր, նո՛ր խոսիր,– ասաց տղան ու վեր կացավ:

– Առաջին զարկն ի՞մն է, թե՞ քոնը,– հարցրեց դևը:

– Քոնն է, զարկի՛ր,– ասաց տղան:

Դևը որ գուրզը գցեց, հողն ու փոշին էնպես երկինք ելան, որ տղան մեջը կորավ:

– Ափսո՜ս,– ասաց դևը,– ձեռս կոտրվեր, էդքան ծանր տված չլինեի, մի երկու կտոր մնացած կլիներ՝ կուտեի:

Մեկ էլ փոշու միջից տղան ասաց.

– Հենց գիտես մեռե՞լ եմ, հիմա իմ հերթն է:

Տղան քաշեց դագանակն ու էնպես զարկեց դևի վզին, որ գլուխը տեղից թռավ–գնաց ու դեռ գնում է:

Տղան գնաց, դևի պալատում դես ման եկավ, դեն ման եկավ, տեսավ մի մեծ սենյակ, մեջը՝ տասը ձի, տասը զինված ձիավոր:

– Ո՞վ եք, ինչ եք,– հարցրեց տղան:

– Մենք ուժեղ մարդիկ ենք, բայց դևը մեզ էստեղ բանտարկել է: Թե ազատես, պետք եղած ժամանակ քո հավարին կհասնենք:

Տղան մի ձեռք նոր սև հագուստ կապեց դևի ձիու մեջքին, տասը ձիերի պոչերից մի–մի մազ պոկեց, մեկն էլ՝ դևի ձիու պոչից, դրեց ծոցն ու էդ մարդկանց ազատ արձակեց: Ինքն էլ խոզերն առաջն արեց, հետ եկավ թագավորի քաղաքը: Եկավ, տեսավ դհոլ–զուռնայի ձենն աշխարհ է բռնել:

– Ինչ կա, էս ինչ է եղել,– հարցրեց:

– Թագավորն իր մեծ աղջկան տալիս է էդ նոր եկած թագավորի տղին,– ասացին:

Տղան խոզերը տեղավորեց, ինքն էլ գնաց իր անկյունը: Մեկ էլ տեսավ՝ թագավորի փոքր աղջիկը եկավ:

– Բարև՛,– ասաց աղջիկը:

– Աստծու բարին, ինչ կա:

– Եկել եմ՝ հետդ մի քիչ զրուցեմ,– ասաց աղջիկը:

– Ես խոզարած մարդ եմ, ինչ ունես հետս խոսելու: Խոզերի հոտին ես կարոտել: Գնա՛:

– Իմ սիրտն ուզում է, որ մի քիչ խոսենք իրար հետ,– ասաց աղջիկը:

– Գնա՛, գնա՛, հարկավոր չես,– ասաց տղան:

Աղջիկը լաց եղավ, գնաց, բայց ուշքն ու միտքը տղայի կողմն էր: Գնաց ուտելիք պատրաստեց, բերեց, դուռը թակեց:

– Հը՛, ինչ կա,– հարցրեց տղան:

– Ուտելիք եմ սարքել, դուռը բաց՝ միասին ուտենք:

Տղան ուտելիքը ձեռքից վերցրեց, աղջկան հրեց, դուրս արեց:

Աղջիկը լաց լինելով գնաց:

Հաջորդ օրն առավոտյան էլի թագավորի պատշգամբին դմբդմբացնելով՝ իր մի շահին վերցրեց, խանութների դռները ջարդելով՝ իր պոպոքն առավ, խոզերին տարավ արածեցնելու: Իրիկունը հետ եկավ, տեսավ՝ ինչ. քաղաքը սևուսուգի մեջ է:

– Ինչ է պատահել,– հարցրեց: Թե՝ բա չես ասի, դևերը եկել են թագավորի մեծ աղջկան տանելու: Թագավորը զորք է հավաքում, որ կռիվ անի:

Տղան գնաց իր տեղը՝ խոզանոց: Մեկ էլ թագավորի փոքր աղջիկն էլի եկավ ու սկսեց լաց լինել:

– Հը՛, ինչ կա,– հարցրեց տղան:

– Աչքերս քոռանան,– ասաց աղջիկը,– դևերը եկել են մեծ քրոջս տանելու:

– Բա հիմա ինչի՞ ես էստեղ եկել:

– Եկել եմ խնդրեմ, որ իմ քրոջն ազատես:

– Ես խոզարած մարդ եմ,– ասաց տղան,– հազիվ իմ խոզերին տեր կանգնեմ: Ինչի՞ չես գնում ձեր մեծ փեսին խնդրում. թագավորի տղա է:

– Նրա բանը չի,– ասաց աղջիկը,– էս դագանակը որ քո ձեռին է, դու ամեն բան կարող ես անել:

– Գնա՛, գնա՛,– հրեց խոզարածն աղջկան,– գլուխս մի՛ տար:

Աղջիկը լաց լինելով գնաց:

Տղան առավոտյան վեր կացավ, դագանակը դրեց ուսին, բանի տեղ չդրեց, որ բոլորը տխուր են. «Իմ մի շահին տվե՛ք, պոպոքս առնեմ գնամ: Խոզերս մնացին»: Շահին տվեցին, պոպոքն առավ գնաց: Խոզերը տարավ հանդ, ծոցից հանեց ձիերի մազերը, կրակ տվեց: Նույն պահին Սև դևի ձին ու տասը ձիավորը կանգնեցին դիմացը: Դևի ձիու վրայից սև հագուստը վերցրեց, հագավ, նստեց ձին ու ձիավորների հետ քշեց դեպի քաղաք: Թագավորը, իր զորքի գլուխն անցած, դուրս էր եկել դևերի դեմ կռվելու: Մեկ էլ

տեսավ, որ տասնմեկ ձիավոր եկան, իր զորքի դիմացով անցան, հասան դևերի զորքին, էնպես ջարդեցին դրանց, որ միայն մի դև ողջ մնաց: Դրա ատամներն էլ տղան քաշեց, շարեց ճակատին ու ասաց.

– Գնա՛, տիրոջդ լո՛ւր տար:

Տասնմեկ ձիավորը ձիերի գլուխները հետ դարձրին ու սլացան: Թագավորը ձայն տվեց.

– Բռնե՛ք, բռնե՛ք, մի նվեր տամ դրանց:

Բայց ձիավորները փախան գնացին:

Տղան հետ եկավ հանդ, ձիավորներին ճանապարհեց, խոզարածի իր շորերը հագավ, խոզերն առաջն արեց, եկավ տուն: Տեսավ՝ քաղաքը քեֆ–ուրախության մեջ է: Թագավորի աղջիկն էլի ուտելիք պատրաստեց, եկավ նրա մոտ:

– Հաց եմ բերել՝ միասին ուտենք,– ասաց աղջիկը:

– Գնա բանի՛դ,– ասաց տղան,– հացը վերցրեց, աղջկան հրեց դուրս: Աղջիկը լաց լինելով գնաց:

Հաջորդ առավոտ, իր շահին ու պոպոքն առնելով, խոզերին քշեց, հասավ Կարմիր դևի սահմանը: Էլի դագանակով էնպես զարկեց դարպասին, որ մի կտորը թռավ Հալեպ, մյուսը՝ Չինմաչին: Խոզերին լցրեց դևի բանջարանոցը, ինքը գնաց, մի մեծ ծառի տակ քնեց:

Ճաշին Կարմիր դևը տուն եկավ, տեսավ դարպասը ջարդված, խոզերն էլ իր այգի–բանջարանոցն են քանդոտում: Արյունը խփեց գլխին: Դես ընկավ, դեն ընկավ, տեսավ ծառի տակ քնած տղային:

– Հողածի՛ն, հողածի՛ն,– գոռաց,– վե՛ր կաց:

Տղան արթնացավ, տեսավ՝ Կարմիր դևը գլխավերևում կանգնած է:

– Ինչ ես ախմախի պես գլխիս կանգնել,– ասաց տղան,– չես թողնում քնեմ:

– Մեծ կտորդ ականջդ եմ թողնելու,– ոռնաց դևը,– էսքան վնաս ես տվել, հլը խոսո՞ւմ ես: Հավքն իր թևով, օձն իր պորտով սիրտ չի անում գալ էստեղ, ո՞նց ես եկել ու բարկանո՞ւմ էլ ես: Ատամներս եռ ու քոր են գալիս, վե՛ր՝ կռվենք:

– Առաջին զարկը քոնն է,– ասաց տղան ու կանգնեց:

Դևը գուրզը գցեց, հողն ու փոշին երկինքն ու գետինը խառնեցին իրար:

– Ափսո՞ս, մի կտոր էլ չմնաց՝ ուտեի,– ասաց դևը: Երբ փոշու ամպը ցրվեց, տղան ասաց.

– Հերթն իմն է,– ու դագանակով էնպես զարկեց, որ դևի գլուխը գնաց, դիպավ Մասիս սարին, սարն իր տեղից շարժվեց:

Կարմիր դևի ապարանքում էլ տասը ձիավոր կար բանտարկված: Նրանց ձիերի պոչերից մի–մի մազ պոկեց, ազատ արձակեց, Կարմիր դևի ձիու մեջքին մի ձեռք նոր կարմիր հագուստ կապեց, պոչից մազ պոկեց ու խոզերն առաջն արեց, եկավ տուն: Եկավ, տեսավ՝ քաղաքում քեֆ–ուրախություն է: Թագավորի փոքր աղջիկը եկավ նրա մոտ.

– Վե՛ր կաց՝ գնանք վերև: Միջնեկ քրոջս ու վեզիրի տղայի նշանդրեքն է: Բոլորն ուտում–խմում, ուրախանում են, դու էստեղ ինչո՞ւ մնաս:

– Գնա՛, գնա՛,– ասաց տղան,– ես ձեզ հարմար մարդ չեմ, ես խոզարած եմ:

– Դու ինձ համար թագավոր ես,– ասաց աղջիկը,– ես քեզ սիրում եմ:

Տղան հրեց, դուրս արեց նրան: Աղջիկը լաց լինելով գնաց:

Առավոտյան խոզարածն իր շահին ու պոպոքն առավ, գնաց հանդ, իսկ երբ իրիկունը եկավ, տեսավ՝ քաղաքը սուգուշիվանի մեջ է:

– Ի՞նչ է պատահել,– հարցրեց:

– Առավոտը դևերը գալու են թագավորի միջնեկ աղջկան տանեն,– ասացին:

Խոզարածը խոզերը ներս արեց, գնաց իր անկյունը: Մեկ էլ լաց լինելով եկավ թագավորի փոքր աղջիկը:

– Վերևը՝ Աստված, ներքևը՝ դու,– ասաց աղջիկը,– ես գիտեմ, որ իմ մեծ քրոջը դու ես ազատել, միջնեկ քրո՛ջս էլ ազատիր:

– Գնա՛, գնա՛,– ասաց տղան,– ձեր թագավորի տղին, վեզիրի տղին ասա՛, թո՛ղ ազատեն:

– Չէ՛, էդ նրանց բանը չի,– ասաց աղջիկը,– թե ազատես, դու կազատես:

Տղան վեր կացավ, աղջկա ձեռքից բռնեց, դուրս արեց: Աղջիկը լաց լինելով գնաց:

Առավոտյան խոզարածն ամեն օրվա պես վեր կացավ, խոզերն առաջն արեց, գնաց հանդ: Ծոցից հանեց ձիերի մազերը, կրակ տվեց, տեսավ՝ Կարմիր դևի ձին, մեկ էլ քսան ձիավոր կողքին կանգնած են: Հագավ կարմիր շորերը, նստեց Կարմիր դևի ձին, ու քշեցին դեպի քաղաք: Իր զորքի գլուխն անցած թագավորը տեսավ, որ մյուս կողմից մի փոշու ամպ է գալիս: Ասաց.

– Աչքներս լույս, հրես գալիս են, մեզ կազատեն:

Երբ քսանմեկ ձիավորները մոտեցան, թագավորն ուրախությունից ձեռուոտ ընկավ:

– Ճամփա՛ տվեք,– գոռաց նա:

Ձիավորները կրակի պես եկան, ընկան դևերի մեջ, էնպես ջարդուխուրդ արեցին, որ միայն մեկը ողջ մնաց: Կարմիր ձիավորը դրան բռնեց, ականջները կտրեց, ասաց՝ գնա՛, տիրոջդ լո՛ւր տար:

Ձիավորները հետ դարձան. ոնց որ կրակի պես հայտնվել էին, էդպես էլ անհետացան:

– Բռնե՛ք, բռնե՛ք, պատիվ տամ,– ձայն էր տալիս թագավորը, բայց էլ ո՛ւր:

Երեկոյան տղան եկավ տուն, տեսավ, որ քաղաքն ուրախության մեջ է: Գնաց, իր խոզանոցում նստեց:

Թագավորի փոքր աղջիկը եկավ, ասաց.

– Վե՛ր կաց, բարձրանանք վերև, ուրախանանք, քեֆ անենք:

– Ես մի խոզարած մարդ, ի՞նչ գործ ունեմ վերևում,– ասաց տղան,– ձեզ չեմ սազում:

– Ես քեզ եմ սիրում,– ասաց աղջիկը,– վե՛ր կաց, բարձրանանք վերև:

Տղան վեր կացավ, աղջկա ձեռքից բռնեց, դուրս արեց:

– Գնա՛,– ասաց,– էս հոտը քեզ հարմար չի: Աղջիկը լաց լինելով գնաց:

Առավոտյան տղան, խոզերն առաջն արած, հասավ Սպիտակ դևի սահմանը: Իր քսանհինգ փթանոց դագանակով ջարդուփշուր արեց դևի դուռ–դարպասը, խոզերը լցրեց այգին, գնաց մի ծառի ստվերում քնեց: Երբ ճաշին Սպիտակ դևը եկավ, տեսավ եղածը, բարկությունից ուղեղը գլխի մեջ դես–դեն գնաց:

– Հողածի՛ն, հողածի՛ն,– գոռաց ու ոտքը խփեց գետնին: Գետինը շարժվեց: Տղան արթնացավ, ասաց.

– Քեզ ի՞նչ եղավ, չէի՞ր կարող սպասեիր՝ մի քիչ քնեի:

– Յոթ տարի է՝ մարդու միս չեմ կերել, ատամներս եռուքոր են գալիս, շատ մի՛ խոսիր, վե՛ր կաց,– ասաց դևը,– մեծ կտորդ ականջդ է մնալու:

– Քո հերթն է,– ասաց տղան,– զարկի՛ր:

Սպիտակ դևը գուրզը նետեց: Հողն ու փոշին երկինքը ծածկեցին:

– Գնաց, գետնի տակն անցավ,– ասաց դևը,– ափսո՛ս, մի կտոր էլ չմնաց՝ ուտեի:

Երբ փոշին անցավ, տղան ասաց.

– Ես տեղս կանգնած եմ, դե՛, հիմա դու տե՛ս, հերթն իմն է:

Ասաց, դագանակը պտտեց ու զարկեց դևի վզին: Դևն ասաց.

– Մե՛կ էլ տուր:

– Մորիցս մեկ եմ ծնվել, իմ զարկն էլ մեկ է,– ասաց տղան: Դևի գլուխը պոկվեց, գնաց ու դեռ գնում է:

Դևի ապարանքում տղան ման եկավ, գտավ բանտարկված տասը ձիավորի, նրանց ձիերի պոչերից մի–մի մազ պոկեց, իրենց ազատ արձակեց, սպիտակ ձիու մեջքին մի ձեռք սպիտակ նոր հագուստ կապեց, պոչից էլ մի մազ պոկեց ու ետ դարձավ տուն: Եկավ, տեսավ՝ վա՛յ–վա՛յը քաղաքը բռնել է: Թագավորի փոքր աղջիկը լաց լինելով եկավ նրա մոտ, ոտքերն ընկավ ու ասաց.

– Ոնց որ իմ երկու քրոջն ազատեցիր, ի՛նձ էլ ազատիր. հիմա էլ դևերը եկել են ինձ տանելու:

– Տանում են՝ տանեն,– ասաց տղան,– ե՞ս ինչ անեմ:

– Ես քո գլխին մատաղ լինեմ, ազատի՛ր ինձ:

– Գործի՛դ գնա, խոզարած մարդ եմ՝ ես ու իմ խոզերը: Գնա՛, թող թագավորի տղեն, վեզիրի տղեն քեզ ազատեն:

– Հողեմ նրանց գլուխը,– ասաց աղջիկը,– նրանց ձեռքից ի՞նչ կգա:

Տղան բռնեց աղջկա ձեռքից, դուրս արեց: Աղջիկը գնաց, ուտելիք պատրաստեց, բերեց խոզարածին:

– Էլի՛ եկար,– ասաց տղան,– քո երեսը բոշայի երե՞ս է:

– Արի՝ միասին ուտենք,– ասաց աղջիկը:

Նստեցին, սկսեցին ուտել: Աղջիկը համ ուտում էր, համ լաց լինում:

– Ինչի՞ ես լաց լինում,– հարցրեց տղան:

– Վախենում եմ... առավոտը դևերը կգան, ինձ կտանեն:

– Ոնց որ քուրերի՞դ տարան:

– Քուրերիս դու ազատեցիր:

– Քեզ էլ կազատեմ, բայց մարդու բան չասես:

Աղջիկն ուրախ–ուրախ բարձրացավ իր սենյակը: Մայրը տեսավ, որ աղջիկը ծիծաղում է, զարմացավ.

– Ի՞նչ է եղել, ինչի՞ ես ծիծաղում: Առավոտը դևերը գալիս են, դու ծիծաղո՞ւմ ես:

– Ա՛յ մեր,– ասաց աղջիկը,– քուրերիս ազատողն ինձ էլ կազատի:

– Է,– տխրում է մայրը,– կազատի, բա չէ՞:

– Ինձ խոստացավ;

– Ո՞վ խոստացավ, ասա տեսնենք՝ ո՞վ է:

– Մարդու բան չե՞ս ասի:

– Չէ՞:

– Մեր խոզարածը:

– Ի՞նչ ես ասում:

– Աստվա՛ծ վկա:

Հաջորդ առավոտ թագավորն իր զորքով գնաց դևերի դեմ կռվելու, բայց սիրտն ահ էր ընկել: Անընդհատ նայում էր աջուձախ, որ տեսնի՝ օգնության հասնողն էս անգա՞մ էլ կլինի, թե՞ չէ: Մեկ էլ տեսավ, որ մի սպիտակ ձիավոր երեսուն ձիավորների խմբով գալիս է:

– Տղե՛րք, աչքներդ լույս,– ասաց,– ճամփա՛, ճամփա՛, ճամփա՛ բացե՛ք:

Երեսունմեկ ձիավորները եկան, ընկան դևերի մեջ, ջարդեցին, փշրեցին, թողեցին մեկին: Դրա ատամները շարեցին ճակատին, թե՝ գնա՛, տիրոջդ լո՛ւր տար:

Թագավորն իր զինվորներին հրամայեց, որ մի հնարով բռնեն ձիավորներին: Տղան իր օգնականներին ասաց.

– Դուք քշե՛ք, գնացե՛ք, ինձ բռնում են՝ բռնեն:

Ձիավորներն անցան–գնացին, իսկ ինքը հանեց դանակը, դաստակի վրա կտրվածք արեց ու, ձին կամաց քշելով, գնաց:

Զինվորները եկան, նրան բռնեցին ու տարան թագավորի մոտ: Թագավորը նրան ընդառաջ վազեց, համբուրեց ձիու ճակատը, իրեն էլ կռացրեց, ճակատը համբուրեց ու ասաց.

– Իմ թագավորությունը քեզ ղուրբան:

Հետո տեսավ, որ ձեռքից արյուն է գալիս, իր թաշկինակով կապեց վերքը: Հենց որ կապեց, տղան ձիուն ասպանդակեց, թռավ գնաց: Ձին արձակեց, հագուստը փոխեց, խոզերն առավ, եկավ տուն: Եկավ, տեսավ՝ քեֆ–ուրախություն է քաղաքում, դհոլ–զուռնայի ձենն աշխարհ է բռնել: Թագավորի փոքր աղջիկն ընտիր ուտելիքներ պատրաստեց, բերեց նրա մոտ: Նստեցին, կերան, խմեցին, իրար հետ անուշ արեցին:

Իսկ թագավորն էդ ժամանակ կնոջն սկսեց պատմել, թե ինչ էր եղել էդ օրը:

– Ափսո՛ս,– ասաց թագավորը,– չկարողացա բռնել Սպիտակ ձիավորին:

Կինն սկսեց ծիծաղել.

– Քո ասած ձիավորը մեր խոզարածն է:

– Ինչ ես ասում,– զարմացավ թագավորը:

– Ճիշտ եմ ասում: Կանչի՛ր, հարցրո՛ւ:

Նույն րոպեին թագավորը հրամայեց, որ կանչեն խոզարածին: Տղան եկավ, թագավորը տեսավ նրա ձեռքի թաշկինակը, քանդեց կապը, տեսավ վերքն ու մնաց զարմացած:

– Էս ի՞նչ է,– հարցրեց նա:

– Դե որ թագավորի տղան խոզարած դառնա, վեզիրի տղան՝ թագավորի որդի, զարմանալի չի, որ թագավորի տղան իրեն գժի տեղ դնի: Չես հավատո՞ւմ՝ կանչի՛ր քո մեծ փեսային, տե՛ս՝ իմ բազպանը նրա ձեռքի՞ն է, թե՞ չէ:

Թագավորը կանչում է մեծ փեսային, բազպանը հանում, տեսնում, որ նրանը չէ:

– Դահի՛ճ,– կանչում է թագավորը:

Դահիճը գալիս է, խաբեբայի գլուխը կտրում: Թագավորը բազպանը տալիս է տիրոջն ու ասում.

– Իմ փոքր աղջիկն էլ՝ քեզ հարսնացու:

Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում, նրան թագավորի փոքր աղջկա հետ պսակում: Մի քանի օրից նորապսակները գնում են տղայի հոր երկիրը: Ծեր թագավորը մահացած է լինում: Տղան նստում է հոր գահին:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Աստծուց երեք խնձոր ընկավ ցած՝ մեկն ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ էս հեքիաթը հասկացողին:

Վուշը

Վուշը ծաղկել էր՝ բացելով իր սքանչելի երկնագույն ծաղիկները, որոնք նուրբ էին ու քնքուշ, ինչպես թիթեռի թևերը, կամ գուցե և ավելի քնքուշ: Նրան գուրգուրում էր արևը, ոռոգում էր անձրևը, և վուշի համար դա նույնքան օգտավետ էր ու դուրեկան, որքան փոքրիկ երեխաների համար, երբ մայրը լվանում է նրանց երեսը, ապա՝ համբուրում: Երեխաները դրանից լավանում էին, լավանում էր և վուշը:

– Մարդիկ ասում են, թե իբր ես լավ եմ աճել և դեռ էլի կերկարեմ,– ասաց մի անգամ վուշը,– իսկ հետո ինձանից հիանալի քաթան կստացվի: Ա՜խ, ի՜նչ երջանիկ եմ ես: Բոլորից էլ երջանիկ: Ինչքա՜ն ուրախալի է իմանալ, որ ես օգտակար եմ: Արևն ինձ զվարթացնում է, իսկ անձրևը՝ թարմացնում, և ի՜նչ համեղ է այն: Օ՜, որքա՜ն երջանիկ եմ ես, որքա՜ն երջանիկ: Ես ամենաերջանիկն եմ ամբողջ աշխարհում:

– Դեդե՜,– ձայն տվեցին ցանկապատի ցցերը:– Դու դեռ կյանքը չես ճանաչում, իսկ մենք ճանաչում ենք. տեսնո՞ւմ ես որքան խլխլոտ ենք:

Եվ նրանք ողբագին ճռճռացին.

Ճռռան, ճռռան, ճռացավ,
Ահա երգը վերջացավ:

– Ամենևին էլ չվերջացավ,– ասաց վուշը:– Վաղը նորից արևը կջերմացնի, նորից անձրև կգա: Ես զգում եմ, որ աճում եմ ու ծաղկում: Ես աշխարհում ամենաերջանիկն եմ:

Բայց ահա մի օր մարդիկ եկան, վուշի գագաթից բռնեցին ու արմատահան արեցին: Ինչ ցավ պատճառեցին: Հետո դրին ջրի մեջ, ասես ուզում էին խեղդել, իսկ երբ ջրից հանեցին, բռնեցին կրակի վրա, կարծես ուզում էին տապակել: Ինչ սոսկալի էր:

– Դե հո չե՞նք կարող հավիտենապես ապրել մեր բավականության համար,– ասաց վուշը:– Հարկավոր է նաև նեղություն քաշել: Ի՞նչ կա որ, դրանից ավելի խելացի ես դառնում:

Բայց վուշի դրությունը շատ էր ծանր. մե՛կ տրորում էին նրան, մեկ կոտրտում, մեկ քձձում ու սանրում: Ինչ ասես, որ չէին անում նրան, ամեն ինչ հո հիշել չի լինի: Բայց ահա, վերջապես, նա մանարան ընկավ: Ճռանճռացա՛վ: Եվ նրա մտքերն ակամա թռան ամեն ուղղությամբ:

«Դե՛, ի՞նչ կա որ, ես հո երկար ժամանակ այնքան երջանիկ էի,– մտածում էր նա, երբ այդպես տանջում էին իրեն:– Հարկավոր է շնորհակալ լինել այն ամենի համար, որ ինձ բաժին էր ընկել: Այո, հարկավոր է, հարկավոր... Օ՜»:– Եվ նա այս խոսքերը կրկնում էր նույնիսկ, երբ ջուլհակի դազգահի մեջ ընկավ:

Բայց ահա, վերջապես, նրանից ստացվեց մի կտոր հիանալի քաթան: Ամբողջ վուշը, մինչև վերջին ցողունը, գործածվեց այդ կտորի վրա:

– Ինչ հաջողություն է սա: Ա՛յ թե մտքովս էլ չէր անցնի: Ոնց էլ բախտս բերում է: Իսկ այն ճռճռան ցցերը ոչինչ չեն հասկանում.

«Ճռռան, ճռռան, ճռացավ, ահա երգը վերջացավ»: Երգն ամենևին էլ չվերջացավ: Հենց միայն հիմա է սկսվում այն: Ա՛յ քեզ բախտ: Ինչ անենք, որ ես մի քիչ չարչարվեցի: Բայց հո՞ մի օգուտ կտամ: Չէ, ես աշխարհում ամենաերջանիկն եմ: Հիմա ես որքա՜ն ամուր եմ, փափուկ, սպիտակ, երկար: Իսկապես որ սա ավելի լավ է, քան հենց միայն դաշտում աճելը կամ նույնիսկ ծաղկելը: Այնտեղ ոչ ոք ինձ չէր խնամում, ջուր ես միայն անձրևից էի տեսնում: Իսկ հիմա ինձ մոտ ծառաներ են դրել, ամեն առավոտ ինձ շուռումուռ են տալիս, ամեն երեկո ջրում են ջրցանով: Ինքը՝ քահանայի կինը, իմ գլխին ճառ արտասանեց և ասաց, որ ամբողջ շրջակայքում ինձնից լավ կտոր չի գտնվի: Դե, կարելի՞ է ինձնից ավելի երջանիկ լինել:

Քաթանը տուն տարան, և նա ընկավ մկրատի տակ: Ա՛յ թե չարչարանք կրեց հա՜: Եվ կտրատում էին նրան, և՛ պատռում, և՛ ասեղով ծակծկում: Այո՛, չի կարելի ասել, թե դա շատ հաճելի բան էր: Բայց դրա փոխարեն քաթանից ստացվեց տասներկու այնպիսի սպիտակեղեն, որի անունը հասարակության մեջ տալն ընդունված չէ, բայց որի կարիքը բոլորն են զգում: Ամբողջ տասներկու հատ:

– Ա՛յ թե երբ օգտակար եղա ես: Ա՛յ թե որն է եղել իմ դերը: Որքա՜ն լավ բան է սա: Հիմա ես էլ օգուտ եմ տալիս աշխարհին, և չէ՞ որ հենց սա է կյանքի ամբողջ իմաստը, ամբողջ բերկրանքը: Մենք տասներկու հատ ենք, բայց և այնպես մի ամբողջություն ենք, մենք մի դյուժին ենք: Ինչ երջանկություն:

Անցավ մի քանի տարի, և սպիտակեղենը մաշվեց:

– Աշխարհում ամեն ինչ իր վախճանն ունի,– ասում էր նա:– Ես, իհարկե, ուրախ կլինեի էլի ծառայել, բայց հո չի՞ կարելի անհնարինը պահանջել:

Եվ ահա սպիտակեղենը ծվեն-ծվեն արեցին: Նա արդեն կարծում էր, թե բոլորովին իր վախճանը եկավ. այնպե՜ս էին

կտրատել, տրորել ու եփել նրան... ու մեկ էլ հանկարծ դարձավ բարա՛կ, սպիտակ թուղթ:

– Ա՛յ քեզ անակնկալ,– գոչեց թուղթը,– հիմա ես առաջվանից էլ բարակ եմ, և ինձ վրա կարելի է գրել: Ինչե՞ր պիտի գրեն ինձ վրա: Ի՜նչ երջանկություն:

Եվ նրա վրա հիանալի պատմվածքներ գրեցին: Այդ պատմվածքները լսելով՝ մարդիկ դառնում էին ավելի բարեսիրտ ու ավելի խելացի. ախր այնքա՜ն լավ ու խելացի էին գրված դրանք: Ի՜նչ երջանկություն, որ հիմա մարդիկ կարող էին կարդալ այդ պատմվածքները:

– Ա՛յ, սա արդեն ես երազել անգամ չէի կարող, երբ դաշտում կանգնած էի, և ինձ վրա երկնագույն ծաղիկներ էին բացվել,– ասում էր թուղթը:– Եվ կարո՞ղ էի ես այն ժամանակ մտածել, որ ինձ բախտ կվիճակվի մարդկանց մեջ ուրախություն ու գիտություն տարածել: Հիացմունքից ես ուղղակի ուշքի գալ չեմ կարողանում: Ուղղակի հավատալս չի գալիս: Բայց սա իրականություն է: Աստված էլ գիտի, որ ես այստեղ մեղավոր չեմ. ես միայն աշխատում էի իմ թույլ ուժերի ներածին չափով անել այն, ինչ հարկավոր էր: Եվ ահա նա ինձ մի հպարտ ուրախությունից մյուսին է հասցնում: Բավական է մտքովս անցնի՝ «Ահա երգը վերջացավ», մեկ էլ հանկարծ ինձ համար մի նոր, ավելի բարձր կյանք է սկսվում: Հիմա ես փափագում եմ ճանապարհ ընկնել, ամբողջ աշխարհը շրջել, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան կարդալ այն, ինչ գրված է ինձ վրա: Այդպես էլ պիտի լինի: Մի ժամանակ ես երկնագույն ծաղիկներ ունեի, այժմ ամեն մի ծաղիկը մի հիանալի միտք է դարձել: Աշխարհումս ինձնից ավելի երջանիկ ոչ ոք չկա:

Բայց թուղթը դուրս չեկավ ճանապարհորդության, այլ ընկավ տպարան, և այն ամենը, ինչ գրված էր, տպեցին գրքի մեջ, այն էլ ոչ թե մեկ, այլ՝ հազարավոր գրքերի: Այդ գրքերը օգուտ

տալ և բավականություն պատճառել կարող էին շատ ավելի մեծ թվով մարդկանց, քան այն թուղթը, որի վրա գրված էին պատմվածքները. աշխարհից աշխարհ թափառելիս այդ թուղթը կարող էր արագորեն քրքրվել:

«Այո, իհարկե, սա ավելի ճիշտ ձև է,– մտածեց գրոտած թուղթը:– Սա իմ մտքովն էլ չէր անցնի: Ես կապրեմ տանը հանգիստ ու խաղաղ, և ինձ կհարգեն ու կպատվեն, ինչպես պառավ տատիկի: Չէ՞ որ ես պահում եմ այն ամենը, ինչ գրված է ինձ վրա, բառերը գրչածայրից ուղիղ ինձ վրա են հոսել: Ես կմնամ, իսկ գրքերը կճանապարհորդեն աշխարհե-աշխարհ: Դա շա՜տ խելացի ձև է: Օ՜, որքա՜ն երջանիկ եմ ես, որքա՜ն երջանիկ»:

Այդ ժամանակ թղթի առանձին-առանձին թերթերը հավաքեցին, մի կապ արին ու դրին դարակի վրա:

– Դե, հիմա արդեն կարելի է դափնիների վրա հանգստանալ,– ասաց թուղթը:– Ոչինչ չի խանգարում մտքերը ժողովել ու կենտրոնանալ: Հիմա եմ միայն ինչպես հարկն է հասկանում, թե ինչ կա իմ մեջ: Իսկ ճանաչել իրեն՝ նշանակում է մի մեծ քայլ անել դեպի առաջ: Բայց ի՞նչ կա իմ առջև: Կատարելագործման ուղին: Ամեն ինչ առաջ է ընթանում դեպի կատարյալը:

Մի գեղեցիկ օր թուղթը վերցրին ու վառարանը գցեցին, որոշել էին վառել, որովհետև մանրավաճառի խանութում հրաժարվեցին գնել այն. կարագի կամ շաքարավազի փաթեթ դարձնելու համար պիտանի չէր:

Տանը բոլոր երեխաները հավաքվել, շրջան էին կազմել, ուզում էին տեսնել, թե թուղթը ինչպես կբռնկի, կարմիր հրավառ կայծերն ինչպես կթռչեն իրար հետևից ու կմարեն, կնվազեն այնպես արագ, ինչպես երեխաներն են դուրս վազում դպրոցից: Ամենավերջին կայծը՝ ճիշտ ինչպես դպրոցի ուսուցիչը. բոլորը կարծում են, թե նա արդեն դուրս է գնացել, այնինչ նա բոլորից հետո է երևում:

Եվ ահա կրակը բռնեց թուղթը: Ինչպե՞ս բռնկեց նա:

– Ո՛ւխ,– ասաց թուղթը և նույն րոպեին դարձավ բոցի մի սյուն, որ բա՛րձր–բարձր սլացավ դեպի վեր. վուշը երբեք չէր կարող իր երկնագույն գլխիկներն այդպիսի բարձրության վրա հասցնել: Եվ նա փայլում էր այնպիսի կուրացուցիչ փայլով, ինչպես երբեք չէր փայլել սպիտակ քաթանը: Թղթի վրա գրված տառերը մի ակնթարթում չքացան, և բոլոր բառերն ու մտքերը բոց դարձան:

– Հիմա ես կբարձրանամ ուղիղ արևի մոտ,– ասաց բոցը և դուրս թռավ ծխնելույզից, իսկ օդում տարածվեցին մանրիկ, անտեսանելի էակներ, որոնք ավելի թեթև էին բոցից, որից ծնվել էին: Եվ նրանք այնքան էին, որքան ծաղիկներ կային վուշի վրա: Իսկ երբ բոցը մարեց, և թղթից միայն սև մոխիր մնաց, նրանք նորից պարել սկսեցին մոխրի վրա, և այնտեղ, որտեղ նրանց ոտքերն էին դիպչում, կարմիր կայծեր էին ծագում: Երեխաները դուրս վազեցին դպրոցից: Վերջինը դուրս եկավ ուսուցիչը: Ինչ ուրախալի էր նրանց նայելը: Եվ երեխաները մեռյալ մոխրի վրա երգեցին.

Ճռռան, ճռռան, ճռացավ,
Ահա երգը վերջացավ:

Իսկ անտեսանելի մանրիկ էակներն ասում էին.

– Երգը երբեք էլ չի վերջանում, այ թե որն է ամենազարմանալին: Մենք այդ գիտենք, դրա համար էլ մենք ամենաերջանիկն ենք:

Բայց երեխաները նրանց խոսքերը չլսեցին և եթե լսեին էլ, ոչինչ չէին հասկանա: Եվ լավն էլ հենց դա է: Պետք չէ, որ երեխաներն ամեն բան իմանան:

Հայրենի տան մեխը

Մի աղքատ գյուղացի ու նրա կինը երեք տղա ունեին՝ Մաթսը, Պետերը և Սվենդը: Մի անգամ երաշտ եղավ, և ընտանիքը նեղության մեջ ընկավ. հացը չէր բավարարում:

– Մենք ավելի շատ ուտող բերան ունենք, քան հացի պատառ,– ասաց հայրը,– ստիպված պետք է աշխատանքի գնաք դուք, որդիներս:

Կինը լաց եղավ.

– Մաթսն ու Պետերն արդեն մեծ են, նրանք գլուխ կհանեն աշխատանքից,– ասաց նա,– բայց, այ, խեղճ Սվենդը կկորչի: Ինչ պիտի վաստակի նա…

– Թող հովիվ դառնա, եթե ուրիշ ոչինչ անել չի կարողանա, – պատասխանեց ամուսինը:

Իսկ Սվենդն ասաց.

– Մի՛ անհանգստանա, մայրիկ, ես կաշխատեմ ինձ համար մի գործ գտնել: Թո՛ղ գնամ:

– Լավ:

Եղբայրներն սկսեցին ճանապարհի պատրաստություն տեսնել:

Ավագ որդին՝ Մաթսը, ասաց.

– Թողեք վերցնեմ հորս հին բաճկոնը. չէ՞ որ հայրս տանը նստած է, բաճկոնը նրան պետք չէ:

Միջնեկ եղբայրը՝ Պետերը, աչք ածեց աղքատ խրճիթը. ընտրելու ոչինչ չկար: Մայրը մի հատիկ կաթսա ուներ, որը շատ էր սիրում ու հպարտանում էր դրանով և այնպես խնամքով էր մաքրում, որ արևի պես շողում էր մռայլ ու մրոտված խրճիթում:

– Ես կվերցնեմ կաթսան,– ասաց Պետերը,– միևնույն է, մայրիկը ոչինչ չունի եփելու, իսկ ես այն կծախեմ ու մինչև աշխատանք գտնելը կապրեմ դրա փողով:

Նա թարեքի վրայից վերցրեց փայլուն կաթսան ու դրեց իր գլխին՝ գլխարկի փոխարեն:

– Բայց, ա՛յ, Սվենդին ոչինչ չհասավ,– հառաչեց մայրը:

Նա շատ էր սիրում կրտսեր որդուն, որն այնքան սիրալիր էր, փաղաքուշ, համեստ և միշտ օգնում էր մորը՝ ինչով կարողանում էր:

– Իսկ ես, մայրի՛կ, տնից հիշատակ կվերցնեմ այն մեխը, որից կախում էի բաճկոնս, երբ պառկում էի քնելու:

Սվենդը մեխը հանեց պատից, փաթաթեց լաթի մեջ ու դրեց գրպանը:

– Ա՛յ քեզ անխելք,– հռհռացին երկու եղբայրները,– բա՜ն մտածեց. հետը պիտի քարշ տա ժանգոտած մեխը... Ի՞նչ ես անելու այդ մեխը, Սվե՛նդ:

– Գուցե պետք գա, ի՞նչ իմանաս,– պատասխանեց տղան: Նրա սիրտն այնքան ուրախ էր, որ ասես թե իր հետ ոչ թե մեխ էր վերցրել, այլ ոսկի:

Մայրը արցունքն աչքերին նայում էր որդիների հետևից, իսկ Սվենդը դեռ երկար ժամանակ թափահարում էր գլխարկը,

հրաժեշտ էր տալիս մորը: Խաչմերուկում ավագ եղբայրները կանգ առան:

– Ես ու Պետերը կգնանք իրար հետ, իսկ դու, Սվենդ, քո մեխն առ ու գնա մենակ, մի՛ արի մեզ հետ,– ասաց Մաթսը:

– Դե՛, որ այդպես է, գնա՛ք բարով, սիրելի՛ եղբայրներ, բարի ճանապարհ: Հուսով եմ, որ շուտով կհանդիպենք,– բացականչեց Սվենդն ու թեքվեց դեպի գյուղամիջյան ճանապարհը:

Մի երկու ժամ անց նա արդեն հոգնել էր, իսկ մոտերքում բնակավայր դեռ չէր երևում:

Հանկարծ առջևում՝ ճանապարհի վրա, ինչ-որ բան շարժվեց: Սվենդը վախով մտածեց.

«Չլինի՞ թե արջ է. ինչպե՞ս փրկվեմ»:

Բայց շարժվողը մարդ էր. սայլակի մոտ գործ էր անում:

– Մի ինձ լսիր, մանչո՛ւկ,– ձայն տվեց նա Սվենդին,– արի օգնի՛ր: Սայլի անիվը դուրս է եկել, չեմ կարողանա դարբնոց հասնել:

– Ես մի մեխ ունեմ, կարելի է խրել ճուլկու փոխարեն: Միայն թե ես փոխարինաբար կտամ, այդ մեխն ինձ համար թանկ է. իմ հայրենի տնից է:

Գյուղացին քահ-քահ ծիծաղեց.

– Համա թե զվարճալի տղա ես, հա՛: Հետ կստանաս քո այդ թանկագին մեխը, հենց որ դարբնոց հասնենք:

Գյուղացին ու Սվենդը նորոգեցին անիվը, նստեցին սայլն ու գնացին դարբնոց տանող ճանապարհով:

Զնդանի մոտ կանգնել էր ամբողջովին մրոտված ու քրտնած դարբինն ու ամբողջ ուժով ծեծում էր շիկացած երկաթը:

Սվենդը դեռ ոչ մի անգամ չէր եղել դարբնոցում, և այդտեղ ամեն ինչ նրան դուր եկավ:

– Ի՞նչ ուրախ է այստեղ՝ ձեզ մոտ: Փուքսը սուլում է, մուրճը դմբում է... ուղղակի երաժշտություն է: Ես էլ կցանկանայի դարբին լինել:

Դարբինը քրքջաց.

– Մի՛ ծիծաղեցրու, շատախո՛ս: Ո՞նց կկարողանաս գլուխ հանել այս ծանր գործից, ուժդ ո՞նց կպատի: Սա քեզ համար խաղալիք չէ, բայց, ա՛յ, եթե ուզում ես, փուքսը փչիր, մինչև իմ տղան առողջանա: Քեզ կուշտ կկերակրեմ ու դեռ մի քանի գրոշ էլ կտամ աշխատանքիդ համար:

– Դե՛, ի՛նչ կա որ, համաձայն եմ,– պատասխանեց Սվենդը:

Ու նա մնաց դարբնի մոտ: Իր մեխը նա գյուղացուց հետ ստացավ, ուղղեց, փաթաթեց լաթի մեջ ու գրպանը դրեց, իսկ գյուղացին նրան մի քիչ փող տվեց օգնելու համար:

Դարբինը տեսավ, որ Սվենդը լավ տղա է, պարտաճանաչ աշխատող, սկսեց նրան սովորեցնել իր արհեստը: Շատ չանցած՝ Սվենդն արդեն կարողանում էր շատ բաներ ինքնուրույն պատրաստել:

Մի ամիս էլ չէր անցել՝ դարբնի տղան առողջացավ: Եվ նա չէր կարողանա այլևս Սվենդին պահել իր մոտ: Տղան ստիպված էր շարունակել իր ճանապարհը:

Դարբնից ստանալով իր աշխատանքի վարձը՝ Սվենդն ուրախ-զվարթ երգելով ճամփա ընկավ:

Շուտով նա հասավ ճամփեզրի մենավոր մի տնակի: Շեմին մի ծուռոտն ու ակնոցավոր մարդ էր կանգնած, որի վզից՝ երկար երիզի ծայրից, մկրատ էր կախված: Նա դերձակ էր. ձեռքում բռնել էր մի բաճկոն ու մաքրում էր: Հանկարծ բաճկոնը սահեց նրա ձեռքից ու ընկավ ցողաթաթախ խոտերի վրա:

– Դուք ավելի լավ է կախեիք բաճկոնը, տե՛ր իմ,– խորհուրդ տվեց Սվենդը:

– Բան մի՛ սովորեցրու ինձ, կաթնակե՛ր,– ասաց դերձակը,– առանց քեզ էլ գիտեմ, թե ինչ եմ անելու:

Բայց Սվենդը չնեղացավ դերձակի այս խոսքից, միայն ասաց ցածր ձայնով.

– Ես Ձեզ կօգնեմ, տե՛ր իմ:

Նա գրպանից հանեց մեխն ու խփեց դռան ձողափայտին:

Դերձակը ժպտաց, բաճկոնը կախեց ու մաքրեց, հետո Սվենդին տուն կանչեց ու կնոջը պատվիրեց տղային հաց ու կաթ տալ: Սվենդը հաճույքով կերավ. ախր շատ էր քաղցած: Այնուհետև քաղաքավարությամբ շնորհակալություն հայտնեց կնոջը: Տանտիրուհուն դա շատ դուր եկավ:

– Տղային վերցրու մոտդ, սովորեցրու,– ասաց նա:

– Ես հաճույքով կմնամ Ձեզ մոտ,– պատասխանեց Սվենդը,– թեպետ արհեստով դարբին եմ:

Դերձակը ոտից գլուխ նայեց Սվենդի նիհար կազմվածքին ու բարձր քրքջաց.

– Ա՛յ թե լավ դարբին ես, հա՛: Քո ուժի բանը չէ ծանր մուրճ բարձրացնելը, ախպե՛ր. բայց կարել կկարողանա՞ս:

– Կփորձեմ, – պատասխանեց Սվենդն ու նստեց դերձակի կողքին:

Եվ այսպես Սվենդն սկսեց աշխատել ու դերձակից կարել սովորել: Բայց շուտով դերձակը մրսեց, հիվանդացավ ու մահացավ: Սվենդը դռան վրայից հանեց իր նվիրական մեխը, հրաժեշտ տվեց տանտիրուհուն ու նորից ճամփա ընկավ:

Շուտով նա հասավ մի փոքր գյուղ: Հենց այդ ժամանակ ամպրոպ սկսվեց, ուժեղ քամի բարձրացավ, կայծակը փայլատակեց, ամպերը որոտացին:

Մի տան մոտ՝ պարանի վրա, սպիտակեղեն էին փռել չորացնելու: Մի պառավ շտապեց հավաքել լվացքը, բայց հանկարծ պարանը պոկվեց մեխից:

– Անիծվա՛ծ մեխ,– փնթփնթաց պառավը,– միջից երկու կես եղավ անտերը. հանկարծ լվացքս ցեխի մեջ չթափվի՞…

– Ես կօգնեմ Ձեզ, տատի՛,– առաջարկեց Սվենդը, հանեց իր մեխն ու խփեց պատին:– Թողեք պարանը կապեմ. միայն թե Դուք հետ կտաք ինձ իմ մեխը. դա իմ հայրենի տան մի մասնիկն է…

– Շնորհակալություն քո մեխի համար, բարեկամս: Օգնիր ինձ մինչև անձրևի գալը հավաքել սպիտակեղենս ու տուն տանել:

Սվենդը կատարեց նրա խնդրանքը: Տանը նա տեսավ մի կոշկակարի: Սվենդը կանգնեց դռների մեջ, հիացած նայեց, թե ինչ ճարպկությամբ է կոշկակարը կոշիկի տակ կաշվե ներբան խփում:

– Ես թե՛ դարբին եմ, թե՛ դերձակ, բայց, ա՛յ, կոշիկ կարել չեմ իմանում,– ասաց Սվենդը:

– Հիմարություններ դուրս մի՛ տուր. ի՞նչ դարբին ես դու ախր կամ ի՞նչ դերձակ: Պարզապես կատակ ես անում, բայց, ա՛յ, կոշկակարություն կարելի է քեզ սովորեցնել:

– Ճիշտ որ, տղա՛ ջան, մնա մեզ մոտ,– ասաց պառավը՝ կոշկակարի մայրը:– Ես տեսնում եմ, որ դու խելոք ես ու ջանասեր:

Ու Սվենդը մնաց կոշկակարին աշակերտելու:

Կոշկակարը չգիտեր, թե ինչպես գովեր աշխատասեր ու բարի տղային: Շուտով Սվենդը կարողանում է ոչ միայն նորոգել հին կոշիկները, այլև նորերը կարել: Երեկոները Սվենդը շատ էր մտածում մոր մասին ու որոշեց նրան մի բան նվիրել: Ախր նա՝ խեղճ կինը, ման էր գալիս պատառոտված կոշիկներով: Եվ, ահա, փող հավաքեց, կաշի առավ ու մոր համար կոշիկ կարեց:

Աշնանը Սվենդը հրաժեշտ տվեց տանտերերին, կոշկակարից ստացավ իր աշխատանքի վարձն ու ճանապարհվեց տուն:

Սվենդի ճանապարհն անցնում էր քաղաքի միջով: Շուկայով անցնելիս նա ծեր վաճառականի մոտ մի բաճկոն տեսավ. դա իր հոր բաճկոնն էր, որ վերցրել էր նրա ավագ եղբայրը՝ Մաթսը: Ուրեմն Մաթսը վատ վիճակում է եղել ու վաճառել է բաճկոնը, որպեսզի քաղցած չմնա: Սվենդը գնեց բաճկոնն ու շարունակեց ճամփան:

Հանկարծ մի կրպակում Սվենդը տեսավ արևի տակ շողշողացող մի կաթսա: Պարզ է, դա էլ իր մոր կաթսան է: Ա՛յ թե ուրախացավ Սվենդը, երբ գնեց սիրելի կաթսան:

Վերջապես Սվենդը հասավ հայրենի գյուղը:

Նրանց տանը վառարանում բորբոքվում էր կրակը. ուրիշ լույս չկար: Հայրն ու մայրը նստել էին սեղանի մոտ, իսկ նրանց կողքին՝ պատառոտված շորերով երկու երիտասարդ՝ Մաթսն ու Պետերը:

– Իմ խեղճ որդիներ,– ասում էր մայրը,– տանջվել եք դուք, սովի ու կարիքի մեջ եղել և ոչինչ էլ չեք վաստակել:

– Ոչինչ, մայրիկ,– մխիթարում էին նրան որդիները,– գարնանը կգնանք դաշտում աշխատելու…

Հանկարծ դուռը շրխկոցով բացվեց: Շեմքին կանգնած էր նրանց կրտսեր եղբայրը՝ Սվենդը:

– Բարի երեկո, հարազատներս: Ա՛յ, ես էլ եկա,– ասաց Սվենդը՝ ուրախ նայելով բոլորին:– Ահա քեզ քո բաճկոնը, հայրիկ, իսկ քեզ, մայրիկ, քո սիրելի կաթսան ու մեկ էլ նոր կոշիկներ. ինքս եմ կարել: Բայց դա դեռ բոլորը չէ. վերցրեք իմ վաստակած փողը: Հիմա ես թե՛ դարբին եմ, թե՛ դերձակ, թե՛ կոշկակար ու ձեզ համար դեռ շատ փող կվաստակեմ: Ահա և մեր մեխը. այն միշտ էլ օգնել է ինձ:

Ու Սվենդը մեխը խփեց իր նախկին տեղում:

Եղբայրները նախանձով էին նայում ուրախ պատանուն, որը պատմում էր իր արկածների մասին: Իսկ երջանիկ մայրը, ուրախությունից լաց լինելով, վառարանի մոտ իրար էր անցել ու իր սիրելի կաթսայի մեջ համեղ ընթրիք էր պատրաստում ամբողջ ընտանիքի համար:

Համփորդները

Աքլորը մի օր կտուրը բարձրացավ, որ աշխարհ տեսնի: Վիզը ձգեց, երկարացրեց, բայց բան չտեսավ, դիմացի սարը խանգարում էր:

– Քուչի՛ ախպեր, կարելի է դու գիտենաս, էն սարի ետևն ի՞նչ կա, հարցրեց վերևից բակում պառկած շանը:

– Ես էլ չգիտեմ, – պատասխանեց Քուչին:

– Հապա մինչև ե՞րբ պետք է այդպես մնանք, արի՛ գնանք, մի տեսնենք՝ աշխարհումս ինչ կա, ինչ չկա:

Շունն էլ համաձայնեց: Խոսքները մին արին ու փախան:

Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը մնացին էնտեղ: Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աքլորը բարձրացավ մոտիկ ծառը, քնեցին:

Լուսադեմին աքլորը կանչեց՝ ծուղրուղո՛ւ:

Մի աղվես լսեց աքլորի ձայնը:

– Վա՜հ, սա որտեղի՞ց դուրս եկավ, ա՛յ լավ նախաճաշիկ,– մտածեց աղվեսը ու վազեց:

– Բարի՛ լույս, սանահեր աքլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:

– Գնում ենք աշխարհ տեսնելու,– պատասխանեց աքլորը:

– Օ՜, ինչ լավ բան եք մտածել,– խոսեց աղվեսը:

– Քանի ժամանակ է՝ ես էլ մի կարգին ընկեր եմ ման գալի: Ինչ լավ էր՝ պատահեցինք: Դե՛, ցած արի, որ չուշանանք:

– Ես համաձայն եմ,– ասաց աքլորը.– տես, թե ընկերս էլ համաձայն է, ցած գամ՝ գնանք:

– Որտե՞ղ է ընկերդ:

– Էն թփի տակին:

«Սրա ընկերն էլ երևի իր նման մի աքլոր կլինի. էս էլ իմ ճաշը», – մտածեց աղվեսը ու վազեց թփի կողմը: Հանկարծ որ շունը դուրս եկավ, աղվեսը, պո՛ւկ, փախավ, ո՞նց փախավ:

– Կա՛ց, աղվե՛ս ախպեր, մի վռազի, մենք էլ ենք գալի, էդպես ընկեր չի՛ լինի,– ծառի գլխից ձայն էր տալիս աքլորը:

Շահ Թահմասպի հեքիաթը

Ասում են՝ Շահ Աբասը միամորիկ մի տղա է ունենում, անունը՝ Շահ Թահմասպ: Մի օր Շահ Թահմասպը, հայելու առաջ կանգնած, նայում է գլխի թագին, հագի ծիրանիին, երիտասարդ, գեղեցիկ դեմքին ու ինքն իրեն մտածում. «Տեսնես՝ ինձ պես հզոր ու երջանիկ մարդ այս աշխարհում էլի կա՞»: Ամառվա շոգ կեսօր է լինում: Մոտենում է մորն ու ասում.

– Մայրի՛կ, բաղնիքի սրբիչն ու շորերս տուր՝ գնամ, ջուրը մտնեմ, հովանամ:

– Ախր, կեսօր է, ճաշի ժամ է,– ասում է մայրը:

– Մինչև դու սուփրան փռես, ես ջրից դուրս եկած կլինեմ,– պատասխանում է:

Շահ Թահմասպը սրբիչը կապում է գոտկատեղին, շորերը թողնում է ջրավազանի մոտ ու ջուրը ցատկում: Երբ ջրից գլուխը հանում է, տեսնում է՝ ջրավազանի պռնկին մի չքնաղ թռչուն է նստած: «Ինչ գեղեցիկ է այս թռչունը,– մտածում է,– լավ կլինի՝ սրան բռնեմ»: Որոշում է աննկատ մոտենալ ու թռչնի ոտքերից

բռնել: Այդպես էլ անում է: Հենց բռնում է, թռչունը սկսում է թևերը թափահարել ու օդ բարձրանալ: Շահ Թահմասպը մեկ մտածում է՝ ձեռքերը բաց թողնել, բայց ափսոսում է. չի ուզում այդ գեղեցիկ թռչնից զրկվել: Որոշում է՝ ինչ գնով էլ լինի, բռնի պահի: Ամբողջ ծանրությամբ գետնին է սեղմվում, ոտքերով ծառ ու ճյուղերին է փաթաթվում: Սակայն իզուր. թռչունը մի զարմանահրաշ ուժով նրան գետնից պոկում է ու երկինք հանում:

Մի քանի զար որ բարձրանում են, Շահ Թահմասպի գոտկատեղի սրբիչը բացվում, ներքև է ընկնում: Օդում մորեմերկ կախված՝ Շահ Թահմասպն ինքն իրեն ասում է. «Աստվա՛ծ իմ, Դու ես Արարիչը աշխարհի, և առանց Քեզ աշխարհն ունայն է: Քիչ առաջ իմ պալատում նստած ես փառքի ու հզորության գագաթին էի, իսկ հիմա, տե՛ս, թե ինչ օրն եմ ընկել: Քեզ եմ ապավինում, Տե՛ր, և իմ կյանքը Քո ողորմածությանն եմ հանձնում»: Եվ ահավոր գլխապտույտից Շահ Թահմասպն աչքերը փակում է:

Իսկ թռչունը, վեր ու վեր սլանալով, հասնում է մինչև ամպերը: Երբ նորից է աչքերը բացում, տեսնում է՝ աշխարհն արդեն փոքրիկ ափսեի չափ է: Վախից կրկին աչքերը փակում է: Թռչունն ամբողջ գիշեր թևերը թափահարում, թռչում է երկնքով: Շահ Թահմասպը, թռչնի ոտքերից ամուր կառչած, թռչում է անթափանց խավարի միջով ու անընդհատ իր տեր Աստծուն է հիշում ու փառաբանում. «Ո՛վ ամենազոր, ինձ օգնակա՛ն եղիր և փրկի՛ր»:

Երբ կամաց–կամաց արշալույսը բացվում է, Շահ Թահմասպը նայում, տեսնում է, որ թռչունն արդեն ներքև է իջնում: Երկիրն արդեն մի մեծ սկուտեղի էր նմանվում: Գլուխը բարձրացնում է ու թռչնին ասում.

– Ո՛վ հավք, հանուն ամենազոր Աստծու, որ քեզ թռչուն ու ինձ մարդ է արարել, ասա՛, խնդրում եմ, դու ինձ էսպես ո՞ւր ես տանում: Ձեռքերս հոգնել են, էլ չեմ կարողանում ինձ պահել, ուր որ է՝ կընկնեմ, կջախջախվեմ: Խղճա՛ ինձ, ցած իջեցրու կամ գոնե ասա, թե ինչ ճակատագիր է սպասում դժբախտիս:

Թռչունը ոչինչ չի պատասխանում: Շահ Թահմասպի հուսահատությունն ու սարսափը ավելի են մեծանում: Երբ նորից աչքը բաց է անում ու ներքև նայում, տեսնում է, որ արդեն սաղարթախիտ մի անտառի վրայով են թռչում: «Լավն այն կլինի, եթե ինձ այստեղից ներքև նետեմ ու այս անիծյալ թռչնից ազատվեմ–պրծնեմ, թե չէ, մեկ էլ տեսար, նորից երկինք բարձրացավ»,– մտածում է Շահ Թահմասպը և մի հարմար պահի ձեռքերը բաց է թողնում ու ներքև՝ ծառերի ճյուղ ու տերևների վրա է ընկնում: Տեսնելով, որ ողջ–առողջ է մնացել՝ ձեռքերը դեպի երկինք է պարզում ու սրտանց փառաբանում Աստծուն.

– Փա՛ռքդ շատ, Տե՛ր իմ, չգիտեմ, թե ես ի՞նչ մեղք եմ գործել, որ Դու էսպես չարաչար ինձ փորձում ու տանջում ես: Երանի՜ չտեսնեի ու չիմայվեի այդ հավքի գեղեցիկ ու գույնզգույն թևերով: Եթե անգամ ես մեղավոր եմ, ների՛ր ինձ, քանզի անսահման է Քո բարությունը:

Քառասուն օր շարունակ Շահ Թահմասպը թափառում է անտառում: Քաղցած ժամանակ անտառի մրգերից է ուտում, շոգին ծարավը հագեցնում է աղբյուրների ջրերով: Մի օր՝ իրիկնապահին, երբ արդեն անտառից դուրս էր եկել և հոգնած ու ջարդված քայլում էր արևի տակ, հեռվում սևին տվող ինչ–որ բան է նկատում: Մոտենում է, տեսնում՝ մի դերվիշ է. հագին մետաքսե շորեր, ձեռքին՝ քյաշքուլ ու կացին: Գնում էր՝ «Յա հուա, յա հուա» ասելով: Դերվիշի աչքը հենց Շահ Թահմասպին է ընկնում, կարծում է՝ անտառից փախած վայրի գազան է, վախից կացինը բարձրացնում է, որ պաշտպանվի: Շահ Թահմասպն ասում է.

– Ձեռքդ հե՛ռ տար, դերվի՛շ, էս ի՞նչ ես անում. մի՞թե մարդ արարած չես տեսել:

Դերվիշը մի քայլ հետ է գնում, ձեռքի կացինն իջեցնում:

– Լավ է՝ ձայն հանեցիր, իմացա, որ ադամորդի ես,– ասում է,– թե չէ, կացնովս քեզ մեջտեղից երկու կես էի անելու:

– Այո՛, մարդ արարած եմ,– ասում է:– Քառասուն օր է, ինչ հայրենիքիցս հեռացել, սոված–ծարավ, մերկ ու բոբիկ թափառում եմ անտառում:

Եվ Շահ Թահմասպն իր գլխովն անցածը մեկ–մեկ պատմում է դերվիշին, բայց իր թագավոր լինելու մասին լռում է, որովհետև ամաչում է իր տեսքից ու կերպարանքից: Իսկ երբ մի կտոր հաց է ուզում, դերվիշը պատասխանում է.

– Իմ մախաղի մեջ բան չկա, դատարկ է, բայց եթե գնաս, քաղաք հասնես ու էնտեղ դերվիշություն անես, հա՛ց խնդրես, մի կտոր կճարես:

– Իսկ քաղաքը հեռո՞ւ է,– հարցնում է Շահ Թահմասպը:

– Եթե հիմա ճանապարհ ընկնես, վաղը լուսադեմին կհասնես,– ասում է դերվիշը:– Ես քեզ կտամ դերվիշի իմ քյաշքուլը, գլխարկս ու շորերս: Կգնաս, քաղաքում ման կգաս, կերգես, կասես. «Ունեք՝ ողորմացեք, չունեք՝ ողորմացեք, Աստծու սիրուն, ողորմացեք»:

– Իսկ ինքդ ի՞նչ ես հագնելու,– հարցնում է Շահ Թահմասպը:

– Դու իմ մասին մի՛ մտածիր, ես տակի թեթև շոր ունեմ հագիս,– ասում է դերվիշը:

Շահ Թահմասպը հագնում է դերվիշի շորերը, ձեռքն է առնում քյաշքուլն ու շուռ գալիս, որ շնորհակալություն ասի, տեսնում է՝ չկա, անհետացել է: Այս կողմ է նայում, այն կողմ՝ դերվիշի հետքն էլ չի երևում: Շատ է զարմանում, ինքն իրեն մտածում է. «Գուցե երա՞զ եմ տեսնում»: Մատներով տրորում է աչքերը, նայում է հագի շորերին ու համոզվում, որ երազ չէ: Սկսում է բղավել, կանչել. «Դերվի՛շ, ա՛յ դերվիշ»: Երբ ոչ ոք չի պատասխանում, Շահ Թահմասպը մատը կծում է. «Վա՛յ, ի՞նչ միամիտն եմ. Խիզր մարգարեն էր, ու ես չիմացա»:

Շահ Թահմասպը կոտրված սրտով շարունակում է իր ճանապարհը, գնում է այն քաղաքի ուղղությամբ, որ դերվիշն էր ցույց

տվել: Լուսաբացին հասնում է քաղաք, մոտենում է դարպասը հսկող պահակին, խնդրում է.

– Ունեք՝ ողորմացեք, չունեք՝ ողորմացեք, Աստծու սիրուն, ողորմացեք:

– Դերվիշ բաբա, հեր օրհնած, առավոտ կանուխ դեռ ձեռքս բան չի ընկել. քեզ ի՞նչ տամ, որտեղի՞ց,– ասում է պահակը:

Սոված–ծարավ Շահ Թահմասպը նրա խոսքերին ուշք չի դարձնում ու նորից կրկնում է.

– Ունեք՝ ողորմացեք, չունեք՝ ողորմացեք, Աստծու սիրուն, ողորմացեք:

– Բանիդ հետևից գնա, դերվի՛շ բաբա,– բարկանում է պահակը,– ի՞նչ ես առավոտ շուտ ականջիս տակ մի գլուխ բարբաջում՝ «Ունեք՝ ողորմացե՛ք, չունեք՝ ողորմացեք:»: Կորի գնա՛, քանի վզակոթիդ չեմ հասցրել:

Շահ Թահմասպը շարունակում է հաց խնդրել: Պահակը համբերությունից դուրս է գալիս, ձեռքի բանալիների խրձով խփում է դերվիշի երեսին, դարպասից հեռու քշում:

Շահ Թահմասպը հիմա էլ գնում, կանգնում է հացթուխի փռի մոտ: Տեսնում է՝ թոնիրը վառում է: Մոտենում է.

– Ունեք՝ ողորմացեք, չունեք՝ ողորմացեք, Աստծու սիրուն, ողորմացե՛ք:

– Դերվի՛շ ջան, մենք դեռ հաց չենք թխել, որ քեզ տանք: Գնա՛, մի քիչ պտտի, արի,– ասում է հացթուխը:

Սակայն քաղցած Շահ Թահմասպը շարունակում է ողորմություն խնդրել. «Ունեք՝ ողորմացեք, չունեք՝ ողորմացեք, Աստծու սիրուն, ողորմացե՛ք»:

Հացթուխն ասում է.

– Դերվի՛շ բաբա, մի՞թե լեզու չես հասկանում: Ասացի չէ՞, գնա՛, մի քիչ հետո արի:

Երբ Շահ Թահմասպը երրորդ անգամ է նույն խոսքերը կրկնում, հացթուխը զայրանում, աշակերտներին ասում է.

– Դե որ խոսքը գլուխը չի մտնում, վեր կացեք, մի լավ դա՛ս տվեք, որ էլ չմոռանա:

Աշակերտները, մի–մի ակիշ, գրտնակ, բաթաթ առած, հասնում են դերվիշի վրա ու մի լավ ծեծում, խանութից դուրս են անում: Շահ Թահմասպը ծեծված ու ջարդված հեռանում է ու ինքն իրեն ասում. «Զարմանալի քաղաք է. ոչ ոք չի գթում, մի կտոր հաց չի տալիս թափառական, սոված մարդուն»: Գնում, հասնում է մի ոսկերչի: Ոսկերիչն էլ է նրան խանութից քշում: Բայց նրա աղջիկը խղճում է դերվիշին ու հորից թաքուն մի կապոց է տալիս՝ ասելով.

– Դերվի՛շ բաբա, այս կապոցը քո բաժինն է, քեզ համար եմ բերել:

Շահ Թահմասպը կապոցը բացում, տեսնում է՝ մեջը մի քանի հատ տաք հաց կա ու մի զույգ թանկարժեք ականջող: Հացն ուտում է, իսկ ականջողները պահում է նեղ օրվա համար:

Ամիսներ շարունակ Շահ Թահմասպը սոված ու ծարավ, պատառոտված շորերով թափառում է քաղաքում ու հաց է մուրում: Մի օր էլ լսում է, որ ոսկերչի աղջիկը ամուսնացել է սուլթանի տղայի հետ: Գնում, հասնում է սուլթանի պալատը: Աղջիկն այս անգամ դերվիշին մի մատանի է նվիրում՝ ասելով.

– Իմ խորթ քույրը այսինչ քաղաքում է ապրում: Գնա՛, այս մատանին նրան ցո՛ւյց տուր: Մնացածն արդեն Աստծու ձեռքին է:

Դու մի ասա՝ այդ մատանին կախարդական է լինում: Շահ Թահմասպը գնում, գտնում է այդ աղջկան, որ մի գեղեցկուհի էր, ու ցույց է տալիս քրոջ նվիրած մատանին: Աղջիկը Շահ Թահմասպին տեսնում է թե չէ, ինքնամոռաց սիրահարվում է: Սրանք ամուսնանում են ու սկսում ուրախ ու երջանիկ ապրել այդ քաղաքում:

Տարիներ են անց կենում: Օրերից մի օր Շահ Թահմասպը հանկարծ հիշում է իր հայրենիքն, ու սիրտը թախիծով ու տխրությամբ

է լցվում: Օրերով լուռ ու մունջ նստում է մի անկյունում, գլուխն առնում ձեռքերի մեջ ու իր քաղաքը, մորը, անցած քաղցր օրերը մտաբերում: Կինն այդ ամենը տեսնում է: Մի օր էլ թե՝

– Սիրելի՛ս, վերջերս դու շատ հուսահատ ու տխուր ես: Ի՞նչ է պատահել, ի՞նչ գաղտնի ցավ է քեզ այդպես տանջում, ինչո՞ւ ես օրեցօր այդպես հալվում ու մաշվում:

– Եթե պատմեմ, վախենամ՝ չհավատաս ու ինձ խելագարի տեղ դնես,– խոր հոգոց հանելով ասում է Շահ Թահմասպն ու իր գլխովն անցածը՝ պալատի ջրավազանի պռնկին նստած թռչնից սկսած մինչև Խիզր մարգարեի ձեռքով փրկվելը, հաց մուրալն ու անտեր թափառելը, մեկ առ մեկ կնոջը պատմում: Շահ Թահմասպի պատմածներից ապշած ու զարմացած՝ կինը երկար ժամանակ լռում, ձայն չի հանում:

– Դարդ մի՛ արա,– ասում է կինը՝ սթափվելով,– մենք կգնանք, քո քաղաքը կգտնենք, ինչքան էլ որ հեռու լինի. չէ՞ որ ասում են՝ հարցնելով Մեքքա կհասնես: Վե՛ր կաց մեր ունեցած-չունեցածը վաճառենք ու Սպահանի ճանապարհը բռնենք, գնանք:

Քառասուն օր հետո նրանք հասնում են Սպահանի դարպասներին: Շահ Թահմասպը կնոջը թողնում է դարպասների մոտ՝ վրանում, ինքը մենակ քաղաք է մտնում: Գալիս է, հասնում թագավորական այգին: Ներս է մտնում, տեսնում՝ գոտկատեղին կապած սրբիչը, շորերը, կոշիկները դեռ ջրավազանի մոտ՝ նույն տեղում ընկած են: Նայում է, զարմանում ու ինքն իրեն մտածում. «Մի՞թե այս տարիների ընթացքում ոչ ոք այստեղով չի անցել, որ սրանք հավաքի:»: Վերցնում է սրբիչը, շորերն ու պալատ վազում: Տեսնում է՝ մայրը նույն տեղը նստած՝ սուփրան առաջին, իրեն է սպասում, որ հաց ուտեն: Հենց մոր աչքը որդուն է ընկնում, նեղացած ասում է.

– Իմ թագավո՛ր որդի, ո՞ւր ես, մի՞թե այդքան երկար կլողանան, մի ժամ է հացը գցել, քեզ եմ սպասում:

Շահ Թահմասպը զարմանում, քար է կտրում.

– Մի ժամ: Այս ինչ ես ասում, ա՛յ մեր, մի՞թե գժվել ես: Մի քանի տարի է, որ ես գնացել եմ, իսկ դու ասում ես...

Մայրը նրան ընդհատում է.

– Երևում է՝ շատ ես ջրի մեջ մնացել, մրսել ես, ջերմություն ունես:

Շահ Թահմասպն ուզում է եղելությունը մորը պատմել, բայց լռում, ձայն չի հանում: Նստում է սուփրայի մոտ ու սկսում է դանդաղ ուտել:

Ճաշից հետո իր մոտ է կանչում վեզիրին.

– Վաղուց իրար չենք տեսել, դու ինձ բոլորովին չե՞ս կարոտել,– ասում է:

– Աշխարհի՛ տիրակալ,– խառնվում, իրար է անցնում վեզիրը,– ես ճաշից հետո ընդամենը կես ժամ եմ քնել, ոչ ավելի: Ներող կլինես:

Շահ Թահմասպն ապուշ է կտրում. ո՛չ ասելիքն է իմանում, ո՛չ անելիքը: Վերջը ստիպված կանչում է մորն ու վեզիրին ու գլխովն անցածը մեկ–մեկ նրանց պատմում: Նրանք լսում են, լսում, թերահավատորեն իրար են նայում ու գլուխները շարժում: Հետո Շահ Թահմասպը մարդ է ուղարկում, որ կնոջն ու ունեցվածքը պալատ բերեն: Իսկ ինքը նորից հագնում է թագավորական հանդերձներն ու գնում, նստում իր գահին: Այդ ժամանակ էլ կրկին աչքն ընկնում է հայելուն. նայում է, տեսնում՝ ինքն առաջվա պես երջանիկ է, հզոր ու գեղեցիկ: Նայում է, նայում, հառաչում է ու ասում.

Ո՛վ մարդ, ոչ քո ուրախ ժամիդ խնդա,
Ոչ էլ տխուր, մռայլ ու սև օրըդ ողբա:
Ունայն ու սին, վաղանցուկ են երկուսն էլ.
Խաղաղ ապրիր քո օրերը, Աստվա՛ծ վկա:

Արծաթե դրամը

Կար-չկար՝ մի դրամ կար: Շողշողալով, ցատկոտելով ու զրնգալով՝ դուրս վազեց նա դրամահատարանից և գոչեց.

– Ուռա՛: Այժմ ամբողջ աշխարհը բաց է իմ առաջ: Հիմա ինչպես կզբոսնեմ աշխարհում:

Եվ այդպես էլ եղավ:

Այդ դրամը բռնեցին և՛ մանկան տաք թաթիկները, և՛ ժլատ մարդու պաղ, ոսկրացած մատները: Ծերունիները երկար ժամանակ շուռումուռ էին տալիս դրամը և ձեռքից բաց չէին թողնում, իսկ երիտասարդները ծախսում էին ստանալուն պես: Դրամն արծաթից էր՝ պղնձի փոքրաքանակ խառնուրդով, և ամբողջ տարին շրջում էր այն երկրում, որտեղ նրան հատել էին: Բայց ահա մի օր էլ այդ դրամը գնաց արտասահման՝ ճամփորդելու: Իր բոլոր հայրենակիցներից միայն նա էր, որ մնացել էր ճանապարհորդի քսակում: Սա նույնիսկ չգիտեր էլ այդ դրամի մասին, մինչև որ մի օր դրամն ընկավ նրա մատի տակ:

- Ա՛յ թե ինչ: Ինձ մոտ դեռ մնացել է մեր փողից,– ասաց նա:- Դե, ի՞նչ կա որ, թող սա էլ ճամփորդի:

Եվ նա դրամը նորից դրեց իր քսակի մեջ: Իսկ դրամն ուրախությունից նույնիսկ զրնգաց ու ոստնեց: Այժմ նա պառկած էր իր օտարերկրացի ընկերների կողքին, որոնք գալիս ու գնում էին՝ միմյանց զիջելով իրենց տեղը: Միայն հայրենական դրամը չէր հեռանում քսակից, որով և տարբերվում էր մյուսներից:

Անցան շաբաթներ, և դրամը գնաց շատ հեռու: Միայն թե նա ինքն էլ չգիտեր, թե որտեղ է ընկել: Մյուս դրամներից նա լսել էր, որ նրանք իտալական են ու ֆրանսիական. մեկն ասում էր, թե հիմա իրենք այսինչ քաղաքում են, մյուսները թե՝ այսինչ: Բայց դրամը չէր պատկերացնում այդ քաղաքները. շարունակ քսակում նստած լինելով՝ չես կարողանում աշխարհը տեսնել: Մի անգամ դրամը նկատեց, որ քսակը բաց է, և կամացուկ մոտեցավ անցքին, որպեսզի գոնե մի աչքով նայի աշխարհին: Իհարկե, այդպես չպետք է աներ, բայց հետաքրքրասիրությունը հաղթեց նրան, իսկ դա երբեք անպատիժ չի մնում: Դրամը քսակից գլորվեց, ընկավ շալվարի գրպանը: Երեկոյան, երբ ճանապարհորդը քսակը հանեց, դրամը մնաց գրպանում, և հագուստի հետ նրան դուրս տարան միջանցք, իսկ միջանցքում նա գրպանից ընկավ հատակին, և ոչ ոք դա չնկատեց:

Առավոտյան հագուստը նորից սենյակ տարան, ճանապարհորդը հագավ ու գնաց, իսկ դրամը մնաց: Նրան գտան, վերցրին և խառնեցին երեք ուրիշ դրամների, որպեսզի նրանց հետ միասին սկսի իր պարտականությունները կատարել:

«Ինչ հաճելի բան է աշխարհ վերադառնալը,– մտածեց դրամը,– ծանոթանալ ուրիշ մարդկանց, ուրիշ բարքերի»:

- Այդ ի՞նչ դրամ է,– հանկարծ լսեց նա:- Սա մեր դրամը չէ: Ախր սա կեղծ է, բանի պետք չէ:

Ահա հենց այստեղից էլ սկսվում է դրամի պատմությունը, որը հետո նա ինքն էր պատմում:

«Կեղծ է, բանի պետք չէ». այս խոսքերը լսելով՝ ես ցնցվեցի: Գիտեի, որ ես իսկական արծաթից եմ, շատ զրնգուն եմ և հիանալի կտրված: «Երևի այս մարդիկ սխալվում են,– մտածեցի ես:- Հնարավոր չէ, որ այդ խոսքերը իմ մասին լինեն»: Բայց հենց իմ մասին էին ասում: Նրանք ինձ կեղծ էին անվանում: Նրանց կարծիքով ես բանի պետք չէի:

– Հարկավոր է մի որևէ մութ անկյունում սաղացնել՝ սրա հարցը լուծել,– ասաց այն մարդը, որին բաժին էի ընկել ես:

Այդպես էլ արեց, բայց օրը ցերեկով նորից սկսեցին շատ վիրավորական խոսքեր ասել իմ հասցեին. «Կեղծ է, բանի պետք չէ, հարկավոր է շտապ սրա հարցը լուծել»: Եվ ես դողում էի այն մարդու ձեռքում, որը խաբեությամբ ինձ ուզում էր հանձնել ուրիշին՝ տեղական դրամների հետ խառնելով:

«Ինչ անբախտ դրամ եմ,– մտածում էի այդ ժամանակ:- Ինչ օգուտ, որ արծաթից եմ, զրնգուն և լավ կտրված: Դա գրոշ չարժե: Աշխարհի աչքում դու միշտ էլ այն անունն ունես, ինչ քեզ համարում է աշխարհը: Եվ ի՜նչ սոսկալի բան պետք է լինի անհանգիստ սրտով ման գալը վատ ճանապարհով, եթե ես առանց որևէ մեղք ունենալու տանջվում եմ միայն նրա համար, որ հանցագործի արտաքին ունեմ»:

Ամեն անգամ, երբ ինձ գրպանից հանում էին, ես դողում էի այն մտքից, որ հիմա կսկսեն ինձ զննել: Գիտեի, որ չարացած կշպրտեն ինձ սեղանի վրա. ասես ես ստի ու խաբեբայության մարմնացում լինեի:

Մի անգամ ընկա մի խեղճ կնոջ ձեռք, որն ինձ ստացել էր օրավարձով կատարած ծանր աշխատանքի դիմաց և ոչ մի կերպ չէր կարողանում ինձ ծախսել: Բոլորն ինձանից հրաժարվում էին, և ես իսկական պատիժ էի այդ խեղճ կնոջ համար:

– Ստիպված եմ որևէ մեկին խաբել,– ասաց նա մի անգամ:- Ես այնքան հարուստ չեմ, որ կեղծ դրամը մոտս պահեմ: Արի տա-

նեմ հարուստ հացավաճառի մոտ, դրանից նա չի աղքատանա… Բայց և այնպես, վատ բան եմ մտածում…

«Այս էր պակաս,– մտածեցի ես:- Այս բոլորին հիմա էլ ավելանում է այն, որ ես ծանրանում եմ խեղճ կնոջ խղճի վրա: Մի՞թե տարիների ընթացքում այդպես փոխվել եմ»:

Կինը գնաց հարուստ հացավաճառի մոտ, բայց սա դրամները շատ լավ էր ճանաչում: Ոչ միայն ինձ իր դրամարկղը չդրեց, այլև ուղղակի շպրտեց կնոջ երեսին և, իհարկե, նրան հաց չտվեց: Ա՜խ, որքա՜ն վշտացա ես: «Մի՞թե ինձ կտրել են մարդկանց պատուհասի մեջ գցելու համար,– մտածում էի ես,– ջահել ժամանակ այնքա՜ն առույգ էի և ինքնավստահ, այնքա՜ն էի հավատում իմ արժանիքին: Եվ ես տխրեցի, ինչպես կտխրեր միայն այն խեղճ դրամը, որին ոչ ոք վերցնել չէր ուզում: Բայց կինը ինձ տուն տարավ և, ուշադիր, մեղմ, բարեկամական հայացք գցելով վրաս, ասաց.

– Չէ, ոչ ոքի խաբել չեմ ուզում: Ես քո պռունկը կծակեմ. թող բոլորը տեսնեն, որ դու իսկական դրամ չես… Սպասիր, գուցե դու բախտավո՞ր դրամ ես: Չգիտեմ ինչու՝ ինձ թվում է, որ բախտավոր ես: Ես քեզ կծակեմ, ծակի միջով թել կանցկացնեմ և կկախեմ հարևանիս երեխայի վզից, որ նա բախտավոր լինի:

Եվ նա իմ պռունկը ծակեց: Իհարկե, շատ էլ հաճելի բան չէ, երբ քեզ ծակում են, բայց եթե մի բան լավ մտադրությամբ է արվում, կարելի է դիմանալ: Անցքի միջով թել անցկացրեց, և ես նմանվեցի մեդալիոնի: Այն ժամանակ ինձ կախեցին մի պստիկ երեխայի վզից: Երեխան ինձ նայում ու ժպտում էր, համբուրում էր ինձ, և ես ամբողջ գիշեր հանգստանում էի մանկան տաք, անմեղ կրծքին:

Առավոտյան երեխայի մայրն ինձ զննեց, շոշափեց, և ես իսկույն հասկացա, որ նա ինչ-որ բան մտածեց: Մկրատը վերցրեց ու թելը կտրեց:

– Բախտավոր դրամ է,– ասաց նա,– բայց հարկավոր է այդ բախտը փորձել:

Ապա նա ինձ գցեց քացախի մեջ, և ես ամբողջովին կանաչեցի: Հետո հմտորեն իմ անցքը լցրեց, ինձ մի քիչ տրորեց, և հենց որ աղջամուղջն ընկավ, դուրս եկավ, որ վիճակախաղի տոմս առնի:

Որքա՜ն էր ծանրացել իմ հոգին: Ինձ թվում էր, թե այնքան եմ կծկվել, որտեղ որ է՝ երկու կտոր կլինեմ: Գիտեի, որ ինձ էլի կեղծ են անվանելու և դեն են շպրտելու, և այդ ամենը՝ բազմաթիվ ուրիշ դրամների աչքի առաջ, որոնք պառկած կլինեն դրամարկղում և զարդարված այնպիսի գրությամբ ու նախշերով, որոնցով հպարտանալ կարելի է: Բայց այս անգամ ես խայտառակությունից ազատվեցի: Գնորդներ շատ էին հավաքվել, և վիճակախաղի տոմսեր վաճառողն այնքան էր զբաղված, որ ինձ վրա չնայեց էլ: Չգիտեմ, շահե՞ց արդյոք այն տոմսը, որի դիմաց ինձ վճարեցին, բայց մյուս օրը նորից ինձ զննեցին, համարեցին, որ կեղծ եմ ու մի կողմ դրեցին, իսկ հետո նորից սկսեցին մարդկանց խաբել՝ աշխատելով որևէ կերպ ինձ իրացնել: Շարունակ խաբել և դրա համար ի՞նձ օգտագործել... Ես ազնիվ եմ և պարզապես չէի կարողանում այդ ամենը տանել:

Երկար ժամանակ ես ձեռքից ձեռք էի անցնում, տնից տուն, և ամեն տեղ ինձ հայհոյում էին, շարունակ անիծում: Ոչ ոք ինձ չէր ճանաչում, և արդեն ինքս էլ ինձ չէի վստահում: Ծա՜նր ժամանակներ էին:

Մի անգամ եկավ մի ճանապարհորդ: Նա դյուրահավատ մարդ էր և ինձ տեղական դրամի տեղ դրեց, բայց երբ ուզեց ինձ ծախսել, նորից լսեցի.

- Այդ դրամը բանի պետք չէ, կեղծ է:
- Ինձ տվել են իսկականի տեղ,– ասաց ճանապարհորդը:

Նա սկսեց ուշի-ուշով զննել ինձ, և հանկարծ նրա դեմքին

ժպիտ երևաց, իսկ ես արդեն վաղուց ժպիտ չէի տեսել այն մարդկանց երեսին, ում ձեռքում հայտնվում էի:

- Հնարավոր չէ,– ինքն իրեն ասաց:-Ախր սա իմ հին ծանոթն է: Սա իմ հայրենիքի իսկական ազնիվ դրամն է, բայց ահա ծակել են և կեղծ են անվանում: Ա՛յ քեզ տարօրինակ բան: Բայց ես քեզ կպահեմ և տուն կտանեմ:

Որքա՜ն ուրախացա ես: Ինձ անվանեցին իսկական ազնիվ դրամ: Ես կվերադառնամ հայրենիք, որտեղ բոլորը կընդունեն ինձ ու կհավատան, որ իսկական արծաթից եմ և լավ կտրված դրամ: Այստեղ քիչ մնաց ուրախությունից փայլատակեի, բայց փայլատակելը պողպատի հատկություն է, ոչ թե արծաթի:

Ինձ փաթաթեցին մի բարակ, սպիտակ թղթի մեջ, որպեսզի մյուս դրամների հետ չխառնվեմ և չկորչեմ: Եվ միայն մի տոն օր, երբ ճանապարհորդի մոտ հավաքվել էին իմ հայրենակիցները, ինձ ցույց տվեց նրանց, և բոլորն էլ ինձ հավանեցին: Ասում էին, որ ես շատ ուշագրավ եմ: Բավական հաճելի է, երբ կարողանում ես մարդկանց հետաքրքրել՝ առանց մի խոսք ասելու:

Վերջապես ես ընկա իմ հայրենիքը: Իմ բոլոր տառապանքները վերջացան, և զվարթությունս նորից վերադարձավ: Չէ՞ որ ես իսկական արծաթից եմ, հիանալի կտրված, և ոչ ոք ուշադրություն չի դարձնում, որ իմ պռունկին մի անցք է արված, ինչպես կեղծ դրամների վրա են անում: Դա ոչ մի նշանակություն չունի, եթե միայն դու ինքդ կեղծ չես: Վերջ ի վերջո ճշմարտությունը միշտ հաղթում է, արդեն ես հաստատ համոզված եմ»:

Դրամն այսպես ավարտեց իր պատմությունը:

Զարգանդ թագավորի աղջիկը

Լինում է, չի լինում՝ մի աղքատ մարդ է լինում: Էս մարդը սրա-նրա դռանը մշակություն է անում, օրավարձով աշխատում է, կինն էլ ուրիշների փարախներն է հսկում, ու էդպես իրենց ու իրենց մինուճար որդու՝ Զուրաբի օրական ապրուստը մի կերպ հոգում են: Մի օր էլ էս մարդն ընկնում է սայլի տակ ու, մի ամիս չանցած, մահանում: Զուրաբն էդ ժամանակ չորս տարեկան է լինում: Մայրը շարունակում է փարախներ հսկելով, էս ու էն հարևանի գոմը մաքրելով, խնոցին հարելով՝ մեծացնել որդուն: Էսպես անցնում է մի քանի տարի: Գյուղում հիվանդություն է տարածվում, 25-30 մարդ է մահանում, որովհետև գյուղերում ո՛չ դեղ կար, ո՛չ բժիշկ: Զուրաբի մայրն էլ է մահանում, և տղան որբանում է: Հարևաններից մեկը, որն ապրուստի տեր էր, մի կողմից նրան խղճալով, մյուս կողմից էլ մտածելով, որ տղան արդեն ինը տարեկան է, կարող է հորթ ու գառ արածեցնել, Զուրաբին տանում է իր տուն, իսկ նրա մորից մնացած քանդքնդված հյուղակն էլ միացնում է իր այգուն:

Էս մարդը չորս-հինգ մատղաշ հորթ է ունենում. ամեն օր Որբ Զուրոն (մոր մահից հետո նրան էդպես էին անվանում), հորթերը տանում է արածեցնելու:

Տղան շատ աչքաբաց է լինում: Երբ դառնում է 12 տարեկան, սկսում է գառներն արածեցնել:

Զուրոյի հասակն իր տարիքի համեմատ ցածր էր. ինչպես մեր գյուղում էին ասում՝ «թիզ ու կես՝ գետնի դղեզ[1]», բայց տղան մեծ ուժի տեր էր, ոնց որ իր հայրը: Երբ գյուղի տղաների հետ կոխ էր բռնում, իրենից չորս-հինգ տարով մեծերին հասնելն ու գետնով տալը մեկ էր լինում:

Մի օր գառներն արածեցնելու ժամանակ գայլն ընկնում է հոտի մեջ: Էդ ժամանակ Զուրոն, զառիթափի տակ նստած, իր համար հանգիստ հաց էր ուտում: Գայլը մի գառ է բռնում ու փախցնում: Երբ հովիվներն ու շները կտրում են գայլի առաջը, սա հետ է դառնում ու զառիթափից իրեն ցած է գցում, ընկնում հենց Զուրոյի ոտքերի մոտ: Մինչև կանգնում է, որ փախչի, Զուրո՝ դու Զուրո, ցատկում է ու չոքում գայլի բկին: Տասը րոպե չանցած՝ գայլը խեղդված ընկած էր գետնին: Հովիվներն էս որ տեսնում են, ամեն կողմից բացականչում են. «Զուրո՛, էս ի՞նչ էր, գելխեղդ ես, ա՞ռջ ես, տո՛». մի քանիսն էլ ասում են՝ ասլա՛ն է, ասլա՛ն: Էս դեպքից հետո նրա անունը մնում է Որբ Ասլան:

Երբ լրանում է Ասլանի քսանմեկ տարին, տերը նրան իր ոչխարների հովիվն է դարձնում:

Ասլանը ոչ մի բանից վախ չուներ: Իրիկունները ոչխարը տանում էր գյուղից երեք վերստ հեռու գտնվող քարայրը, շներին քարայրից դուրս էր թողնում, ոչխարները ներս էր անում, ինքն էլ պառկում էր քարայրի մուտքի մոտ, գլուխը հենում մուտքի մի պատին, ոտքերը՝ մյուս, հաց ու ջրի ամանն էլ կախում էր իր գլխավերևն ու հանգիստ քնում:

[1] Դղեզ – մեղու, իշամեղու

Օրերից մի օր Ասլանի սիրտը կասկած է ընկնում. նրան սկսում է թվալ, թե ինչ-որ մեկն իր հաց ու ջրին գիշերը ձեռք է տալիս: Երկար մտմտում է, հետո ինքն իրեն ասում. «Չէ՛, ի՞նձ է թվում, ո՞վ պիտի ձեռ տա. շները դրսում են, ոչխարներն էլ խուրջինին չեն հասնի»:

Անցնում է մի քանի օր: Մի օր էլ էս աղայի կինը Ասլանի համար մի բաղարջ ու չորս ձու է դնում խուրջինի մեջ: Ասլանն էլ խուրջինը ինչպես որ կար՝ բաղարջն ու չորս ձուն մեջը, գիշերը կախում է իր գլխավերևում, առավոտ շուտ վեր է կենում ու տեսնում, որ բաղարջի կեսն ու երկու ձուն չկան: «Ա՛յ հիմա հաստատ է, որ գիշերն էստեղ իմ հացն ու ջուրն ինձ հետ կիսող կա»,– ասում է ինքն իրեն տղան: Էլ չի հանգստանում, շուտ-շուտ արևին է նայում, անհամբեր սպասում, թե ե՞րբ պիտի մութն ընկնի, որ ոչխարը տանի քարայր ու տեսնի, թե գիշերն ո՞վ է էդպես անվախ գալիս ու իր հացը կիսում: Երբ վերջապես մթնում է, Ասլանը ոչխարն արագ-արագ քշում է քարայր, թաղիքե վերարկուն քաշում գլխին, սուտ քուն մտնում ու վերարկուի տակից ծիկրակում: «Բա որ հանկարծ սատանա լինի,– մտածում է ինքն իրեն:– Էհ, լինում է՝ լինի. մորս սովորեցրած աղոթքը կասեմ, սատանեն անդունդը կիջնի»: Էսպես մտքերի մեջ ընկած՝ սպասում է, բայց ահագին ժամանակ է անցնում, ու ոչ մեկն էլ չի երևում, ձայն չի լսվում: Քիչ է մնում, որ քունը հաղթի տղային, երբ մեկ էլ ականջին խշխշոց է հասնում, քունը տեղն ու տեղը փախչում է: Ասլանը նայում է ու ի՞նչ տեսնի, երանի՜ տեսնողի աչքերին. մի սիրուն աղջիկ՝ տասնվեց-տասնյոթ տարեկան, աղջիկ մի ասա՝ մի եղնիկ ասա, մի հուրի-փերի, որ արևին ասում է՝ դու դուրս մի՛ արի, ի՞մ լուսեղեն երեսն աշխարհին լույս կտա: Չգիտեմ՝ էլ ոնց անեմ նրա գովքը. չուտես-չխմես՝ նրա չքնաղ պատկերին նայես: Թե հեքիաթ լսողը ջահել տղա է, թո՛ղ թուքը կուլ տա:

Ասլանը սա որ տեսնում է, քիչ է մնում՝ խելքը գլխից թռչի, ուզում է նետվել նրա կողմը, գրկել, բայց հազիվհազ իրեն զսպում է: Աղջիկը խուրջինն իջեցնում է, ջրից խմում, հացից կտրում, շրջվում է, որ մտնի քարայրի պատի մեջ, որտեղից դուրս էր եկել, բայց էդ պահին Ասլանը գրկում է նրան ու ասում.

– Ախր ո՞ւր ես գնում, դու իմ բախտն ես, որ կաս:

Աղջիկը աղաչում-պաղատում է նրան.

– Թո՛ղ ինձ, տղա՛, ինձնից քեզ խեր[2] չի գա, քեզ փորձանքի մեջ կգցես:

Ասլանն ասում է.

– Քեզ համար կյանքս էլ կտամ, ես ոչ մի բանից էլ չեմ վախենում, մենակ թե մոտս մնա:

Տղայի էս խոսքերից աղջկա սիրտը թուլանում է, ասում է.

– Ինձ լսիր. էստեղից յոթ սար էն կողմ շատ զորեղ մի թագավոր կա, անունը՝ Զարզանդ: Նրանից բոլորը վախենում, դողդողում են: Էդ թագավորն իմ հերն է: Մի անգամ՝ 4-5 ամիս առաջ էր, հորս վրա յոթ թագավոր կռիվ եկան: Հերս զորքը հավաքեց, գնաց կռվի: Էրկու ախպերներս մնացին երկիրը կառավարելու: Բայց էդ խառը ժամանակ իրեք գլխանի Միաչքանի դևն իր վեց ախպերների հետ էկավ, որ ախպերներիս հետ կռվի ու ինձ փախցնի: Ախպերներս փոքր զորք հավաքեցին ու ելան էս վեցի հետ կռվելու: Երբ տասը օր զարկին-զարկվան, տասնմեկերորդ օրը չորս դևերին սպանեցին, բայց իմ մեծ ախպերն էլ սպանվեց: Տասներեքերորդ օրը փոքր ախպերս ու մի դևն էլ սպանվեցին, մեր զորքից էլ շատերը կոտորվեցին, ախպերներս էլ որ չկային՝ զորքը ցրվեց, մարդիկ գնացին իրենց տները: Միաչքանի դևը, որը դևերից ամենամեծն էր, ինձ վերցրեց, տարավ իր երկիրը: Երբ որ հասանք դևի բերդը, ինձ ասաց.

– Դու է՛լ հիմա տեր ու տիրական չունես. քեզ ի՞նչ ուզենամ՝ կանեմ: Խելոքացի՝ ես քեզ աչքիս լուսի պես կպահեմ:

---

[2] Խեր – բարիք

Ես հակառակվեցի, չուզեցի նշանվել նրա հետ: Էսպես քառասուն օր դևը աղաչում-պաղատում էր, ոտքերս էր ընկնում, համոզում էր, մեկ-մեկ էլ վախեցնում էր, բայց ասի՝ «չեմ ուզում» ու մնացի իմ խոսքին: Քառասուն օր անց էս դևն ընկնավորեց՝ փրփուրը տվեց բերանին, մի աչքը մեծացավ, դարձավ մեծ ձմերուկի չափ: Դևն ընկավ գետնին, թփրտում էր ու իմ անունն էր տալիս՝ Սիմիզար ջան, Սիմիզար ջան:

Դևի ջադու մերն էլ, երբ տեսնում էր իր տղի էդքան չարչարանքը, ատամները կրճտացնում էր վրես, աչքերը ոլորում, ուզում էր ինձ կտոր-կտոր անի, բայց տղից վախենում էր: Իրեք օր դևն էդպես մնաց, իրեք օրից հետո ուշքը գլուխն էկավ, էլի քառասուն օր աղաչանք արեց, ձեռուոտ ընկավ, էլի քառասուն օր հետո ընկնավորեց: Երբ իրեք օր հետո ուշքը գլուխն էկավ, կանչեց մորն ու ասաց. «Էս լակոտին տար աչքիցս հեռու, բայց տե՛ս, չվնասես»: Դևի մերը կախարդ էր, կախարդություն անելու վարպետ էր, չգիտեմ՝ ո՛նց արեց, որ աչքս մեկ էլ բացի, տեսա՝ էս քարայրի մեջ եմ: Պառավը ձեռին բռնած կանաչ ճյուղով իրեք անգամ էս քարափին զարկեց, ասաց. «Քա՛ր, տե՛ղ տուր էս թագավորի աղջկան, էնքան պահի, մինչև ծիծեռնակները սրան տանող տղին ճամփան ցույց կտան: Երբ որ էսպես իրեք անգամ կզարկեն, բացվի՛ր ու իր տիրոջը տո՛ւր սրան: Իսկ էգուցվանից կեսգիշերներին, օրը մեկ անգամ, բացվիր՝ թո՛ղ մի քիչ ման գա»: Ահա իմ պատմությունը, թո՛ղ հիմա ես գնամ իմ մութ ու խավար բունը: Դու էլ, թե ասածիդ պես ինձ սիրում ես, գնա՛, ման արի՝ գտիր էն ծիծեռնակներին, որ ինձ ազատելու ճամփան գիտեն:

Տղան թողնում է աղջկան ու ինքն ընկնում մտքերի մեջ:

Հաջորդ օրը առավոտ շուտ՝ լույսը բացվելուն պես, բարին բացվի՛ ձեզ վրա, Ասլանը ոչխարը հավաքում է, ուղիղ քշում իր

աղայի դուռը: Էսպես անժամանակ ոչխարը տուն բերելը զարմացնում է աղային: Ասլանը նրան խնդրում է, որ ի՛նչ վարձ որ իրեն հասնում է՝ տան. ինքը էլ չի ուզում հովվություն անել: Աղան շատ է համոզում նրան, որ մնա, բայց՝ անօգուտ: Ասլանին վճարում ու ճանապարհ է դնում:

Ասլանը գյուղից դուրս է գալիս, կանգնում երեք ճանապարհի վրա ու մոլորվում, թե ո՞ր մեկով գնա: Շատ է մտածում, մոր աղոթքը հիշում, «Հայր մերն» ասում է ու մտքում շարունակում. «Իմ անուշ հորս ու մո՛րս Աստված, աչքերս փակ դագանակս վերև կգցեմ ու Քեզ շատ կխնդրեմ, կաղաչեմ՝ ո՛ր ճամփեն որ բարի է, դագանակս էն ճամփի վրա գցիր»:

Էս ասելուն պես Ասլանը դագանակը վեր է նետում, աչքերը բացում ու տեսնում, որ դագանակն ընկել է մեջտեղի ճանապարհի վրա: Էդ ճանապարհով էլ գնում է:

Գնո՛ւմ, գնո՛ւմ է, շատն ու քիչը Աստված գիտի, իրիկունը մթնշաղին հասնում է մի գյուղի: Անծանոթ գյուղ, տեղ չունի, ծանոթ չունի՝ ո՞ւր գնա: Հանկարծ հիշում է, որ ինքը, ախր, էն ծիծեռնակներին է փնտրում, որոնք իրեն պիտի սովորեցնեն, թե ինչպես ազատի Սիմիզարին:

Տղան անցնում է էս տան կողքով, էն տան մոտով, ուշադիր նայում, որ տեսնի, թե որտեղ ծիծեռնակի բույն կա: Էսպես շատ տների մոտով է անցնում, մի բան էլ չի գտնում: Երբ հասնում է գյուղի վերջում գտնվող մի փոքրիկ տուն, մեկ էլ հանկարծ տեսնում է, որ ահա՛, մի ծիծեռնակ էդ տան դռնից դուրս եկավ ու նորից մտավ ներս: Զարմանում է, որ տարվա էդ ժամանակ ծիծեռնակը ներսուդուրս է անում, և մտածում. «Գուցե բարին էս է: Էս տունը գնամ, խնդրեմ՝ գիշերն ինձ տեղ տան, մինչև տեսնենք՝ Աստված ի՞նչ ճանապարհ է բացելու»:

Ասլանի բախտից՝ տան դուռը բաց է լինում: Նա մտնում է, տեսնում, որ մի ծեր կին ճրագն է վառում: Ասում է.

– Բարև՛, նանե՛:

– Աստծո՛ւ բարին, նանեն քեզ մատաղ լինի,– պատասխանում է պառավ կինը:

– Նանե՛,– ասում է տղան,– օտարական եմ, էստեղ տես ու ծանոթ չունեմ, չի՞ լինի, որ էս գիշեր ինձ հյուր ընդունես:

– Հյուրն Աստծունն է, նե՛րս համեցիր:

Ծեր կինը հյուրին կերակրում է, քնելու ժամանակն էլ որ գալիս է, անկողին է պատրաստում նրա համար ու ինքն էլ պառկում, քնում:

Ասլանի քունը չի տանում: «Աստվա՛ծ, տեսնես սրանք էն ծիծեռնակնե՞րն են, որ Սիմիզարիս ազատելու հնարքը պիտի ինձ սովորեցնեն, թե՞ դեռ շատ պիտի ման գամ նրանց գտնելու համար»: Էսպես երկար մտածելուց հետո քունը տանում, քնում է:

Առավոտյան բարի լույսի հետ Ասլանն արթնանում է, աչքը գցում ծիծեռնակների բնին, տեսնում, որ սրանք շարժվում ու ծլվլում են, մտքում ասում է. «Աստվա՛ծ ջան, ի՞նչ կլինի, որ ինձ շնորհք տաս՝ սրանց լեզուն հասկանամ»: Էդ մտքի հետ՝ մի ծիծեռնակը ծլվլում է, ու տղային թվում է, որ ինքը ոնց որ թե հասկանում է նրան: Ականջները սրում ու լսում է.

– Կնի՛կ,– ասում է որձ ծիծեռնակը:

– Ի՞նչ է,– հարցնում է էգը:

– Էս տղին ճանաչո՞ւմ ես:

– Ոնց որ մի տեղ տեսել եմ: Հա՛, հիշեցի, քարայր որ գնում էինք՝ ճիճու-միճու հավաքելու, սա մեզ հացի փշրանք էր տալիս:

– Հա՛, գտար, Որբ Ասլանն է, մեզ է ման գալիս, որ սովորեցնենք, թե ո՛նց ազատի դևի գերի Սիմիզարին:

– Էդ լավ է, որ հիմի է էկել, քանի տաք երկրներ չենք գնացել:

– Թո՛ղ Ասլանն էսպես անի,– ասում է էգը,– երբ կմոտենա, որ «մնաս բարով» ասի մեր տանտիրոջը, իրեք անգամ թող պինդ-պինդ համբուրի պառավի ձեռը ու իրեք անգամ էլ ասի՝ շնորհակալ եմ, բարի՛ նանե: Պառավն իրեն խրատ կտա, թե ի՞նչ պիտի անի:

Ասլանը, երբ էսքանը լսում է, ուրախությունից չի իմանում՝ ի՞նչ անի:

Երբ լույսը լրիվ բացվում է, տղան արագ-արագ հագնվում է, տեսնում, որ պառավն էլ է արդեն վեր կացել, հագնվել, մոտենում է նրան ու ասում.

– Նանե՛ ջան, ես շտապում եմ, ճամփա պիտի ընկնեմ, ձեռդ տուր՝ մնաս բարով անեմ՝ գնամ:

Ասլանը ծեր կնոջ ձեռքը երեք անգամ համբուրում է և երեք անգամ էլ ասում՝ շնորհակալ եմ, բարի՛ նանե:

Պառավը համբուրում է տղայի ճակատն ու ասում.

– Հալա՛լ լինի քեզ, Զուրա՛բ ջան, իսկական ասլան տղա՛ ջան, գնա՛, Աստված քեզ մուրազիդ կհասցնի, մի՛ վախենա:

Հետո Ասլանին է տալիս տասնչորս հատ պնդուկ, երկու ընկույզ, մի փոքրիկ սրվակով ջուր, շորի մեջ փաթաթած մի բուռ ալյուր և ասում.

– Ես գիտեմ, թե դու ո՛ւր ես գնում: Դևի բերդը էստեղից յոթ օրվա ճամփա է: Էս տասնչորս պնդուկը կգցես գրպանդ, օրական մեկը կուտես: Գյուղից որ մի քիչ կհեռանաս, փոսի մեջ կնստես, էս էրկու պոպոքը կկոտրես. քեզ ի՞նչ որ պետք է ճանապարհի համար, է՛ն էլ կունենաս: Երբ կհասնես դևի պալատը՝ բերդը, որը յոթ նիզակաչափ խորություն ունեցող մի հոր է, կտեսնես, որ հորի պռնկի մոտ նստած հսկում է դևի մերը: Էս տվածս ջուրը կառնես բերանդ ու կփչես նրա երեսին, որ թմրի, դու էլ կմտնես հորը: Միաչքանին քնած կլինի, իրեք օրից նոր պիտի զարթնի: Հորի մեջ կտեսնես փարչի ջրի մեջ տնկած ծառի կանաչ ճյուղը. կվերցնես ու դուրս կգաս: Էս ալյուրն էլ, թե պետք լինի, էնտեղ քեզ ասող կլինի, թե ի՞նչ անես: Դե՛, բարի ճամփա քեզ:

Ասլանի ուրախությունը պատմել չի լինի:

Գյուղից դուրս է գալիս, հասնում փոսին, հանում մի պնդուկն ուտում, էնպես է կշտանում, ոնց որ մի ոչխար կերած լիներ: Հետո

հանում է պոպոքները, մեկը կոտրում, ի՞նչ տեսնում. մի պայտած ձի, ի՞նչ ձի, է՞, հրեղե՛ն, միայն թևերը մարդկանց համար անտեսանելի էին: Ձին իր արծաթե թամբով, սարքով կանգնում է տղայի առաջը: Ասլանն ուրախությունից չի իմանում՝ ի՞նչ անի: Կոտրում է մյուս պոպոքը, տեսնում՝ միջից դուրս եկավ մի նիզակ, մաքուր պողպատից մի գավազան, մի էնպիսի թուր, որ պողպատին քսեիր՝ կկտրեր, մի վահան՝ ի՞նչ վահան, դրա տակ մարդ կտեղավորվեր, հետն էլ՝ մի ձեռք հագուստ, էնքա՜ն սիրուն, որ նկարագրել չի լինի:

Ասլանը նստում է ձիու թամբին: Թե ուզենար, մի ժամում կթռչեր, կհասներ աշխարհի ծերը, բայց նանեի խրատը հիշում է, յոթ օրվա ճանապարհ գնում ու հասնում դևի բերդին: Ինչպես որ նանեն սովորեցրել էր, Ասլանն էդպես էլ անում է, մտնում է հորը, կանաչ ճյուղը հանում, դնում ծոցը, թռչում Քամու (էդպես էր ձիու անունը) թամբին ու «Սիմիզարի քարայր, ո՞ւր ես» ասելով՝ սլանում:

Ասլանը երեք օր էսպես գնում է, չորրորդ օրը՝ իրիկվան մոտ, մեկ էլ հետևից ձայներ է լսում: Ձիու գլուխը շրջում է, տեսնում՝ հետևից փոշին աշխարհ է բռնել. դևն ու նրա մայրը ուր որ է՝ կհասնեն իրեն: Աստծու հրամանով ձին լեզու է առնում ու ասում. «Տղա՛, մոտիդ ալյուրը քամուն տուր»:

Ասլանը ալյուրը քամուն է տալիս, քամին ալյուրը ցրում է ու հենց նույն պահին նրա ու դևի արանքում անտառ է կանգնում, էնքան խիտ անտառ, որ ճյուղերի արանքով թռչուն անգամ չէր անցնի: Ասլանի շունչը տեղն է ընկնում, իսկ դևը մնում է անտառի մյուս կողմում:

Ասլանը, հանգիստ ու ապահով, երկու օրվա ճանապարհ էլ է անցնում. մնում է մեկ օրվա ճանապարհ, որ հասնի Սիմիզարի քարայրին: Տղայի սիրտը թպրտում է, ուզում է վայրկյան առաջ տեղ հասնել, բայց մեկ էլ, դարձյալ, հետևից ձայներ է լսում: Շրջ-

վում է, տեսնում՝ էլի դևն ու մայրը գալիս են: Աստծու հրամանով ձին նորից լեզու է առնում ու ասում.

– Մի՛ վախեցիր, կանգնիր՝ դևի հետ կռվենք:

Ասլանը մինչև դևի հասնելն իր պատրաստությունը տեսնում է, կանգնում, սպասում: Դևը, տղային հասնելուն պես, թաթը գցում է, որ նրա գլխից բռնի, քարերին տա, մեծ կտորն ականջը թողնի, բայց Ասլանը մի կողմ է թեքվում, և դևն իր թափից առաջ է գնում ու սայթաքում: Ասլանը հետևից հասնում է ու թրի մի հարվածով երեք գլուխն էլ թռցնում: Դևը դարձյալ ուղղվում է տղայի կողմը, հիմա էլ ձին է էնպիսի մի աքացի տալիս դևի դնչին, որ սա իրեն մի պահ կորցնում է: Ասլանը թափով հարձակվում է դևի վրա, թրով զարկում ու նրա մի գլուխն էլ է կտրում: Մնում է միայն դևի մեջտեղի գլուխը: Դևը կատաղում է, մի մեծ քար վերցնում ու շպրտում է տղայի վրա: Ասլանը վահանով ծածկվում է, քարը կպչում է վահանին ու ընկնում գետնին: Ասլանը վահանը գցում է թևին, նիզակը երկու ձեռքով պահած՝ հարձակվում դևի վրա ու էնպիսի ուժով զարկում դևի միակ աչքին, որ նիզակի ծայրը նրա ծոծրակից դուրս է գալիս: Դևը սատկում է: Հիմա էլ Ասլանը դևի մորն է սկսում փնտրել՝ բայց մերը չկա:

Ասլանը ձիու գլուխն անում է դեպի քարայրը: Գնո՛ւմ, գնո՛ւմ է, մեկ էլ ճանապարհի կեսին մի մե՛ծ լիճ է տեսնում, էնքան մեծ, որ եթե դրա մակերեսին քառասուն սոմար ցորեն ցանեիր, էլի՛ քիչ կլիներ: Տղան շատ է զարմանում. ախր՝ էդ տեղում լիճ չէր եղել: Ձին, դարձյալ Աստծու հրամանով, խոսում է ու ասում.

– Էս լիճը դևի մոր թուքն է. դևի մերն ուզում է մեզ վնասել, մեր ճամփեն կտրել: Տե՛ս, ինքն էլ օրդակ[3] է դառել՝ լողում է: Դու բաշիցս իրեք մազ պոկի, գցի լճի մեջ:

Ասլանը ձիու բաշից երեք մազ է գցում լճի մեջ, տեղնուտեղը կամուրջ է հայտնվում, և լիճն անցնում են:

[3] Օրդակ – վայրի սագ

Ասլանը ողջ-առողջ հասնում է տեղ, կանաչ ճյուղը ձեռքին վազում քարայրի մոտ, երեք անգամ ճյուղով խփում է քարին ու երեք անգամ էլ ասում. «Քարա՛փ, բացվի՛ր, ճամփա՛ տուր թագավորի աղջկան»:

Քարը բացվում է, Սիմիզարը դուրս է գալիս, ընկնում է Ասլանի գիրկը և ուրախությունից ուշաթափվում: Ասլանը կամաց-կամաց ուշքի է բերում աղջկան: Երբ մի քիչ հանգստանում են, տղան իր գլխով անցածը պատմում է աղջկան: Պատրաստվում են, որ գնան Սիմիզարի հոր քաղաքը, բայց Ասլանն ասում է.

– Սիմի՛կ ջան, քեզ ազատողը ես չեմ, քեզ ազատողին թե մոռանանք, ազնիվ չի լինի: Քեզ ազատողը էն պառավ նանեն է: Սրանից հետո ո՛ւր էլ գնանք, նա մեզ հետ պիտի լինի:

Սիմիզարն ուրախանում է էս խոսքերի համար: Նստում են ձիու թամբին ու, «Նանե՛, ո՛ւր ես» ասելով, ճանապարհ ընկնում: Երեկոյան հասնում են պառավի տուն: Պառավը շատ է ուրախանում Սիմիզարի ազատվելու համար, իսկ երբ իմանում է, որ իրեն էլ են տանելու՝ մոր պես պահեն, ավելի շատ է ուրախանում:

Հաջորդ օրը պառավն ի՞նչ ուներ-չուներ՝ հավաքում է, և ճանապարհ են ընկնում: Նանեն չի համաձայնում, որ ինքն ու Սիմիզարը ձիով գնան, իսկ տղան՝ ոտքով: Նրանց համոզում է, նստեցնում ձիու վրա, իսկ ինքը ծոցից հանում է իր թաշկինակը, փռում ու նստում վրան: Թաշկինակն էնպե՛ս է սլանում, որ ձիուց հետ չի մնում:

Ճամփորդները գնո՛ւմ, գնո՛ւմ են, շատն ու քիչը Աստված գիտի, հասնում են Զարզանդ թագավորի երկրի սահմանին:

Էդտեղ՝ սարի գլխին, մի ամրոց կար, որտեղ զորքն իր մեծավորի հետ հսկում էր, որ հանկարծ թշնամին սահմանը չանցնի:

Մեծավորը վերևից հեռադիտակով նայում, տեսնում է, որ երեք հոգի մոտենում են սահմանին և ուզում են անցնել իրենց թագա-

վորի հողը: Տասը հոգի իր զինվորներից ուղարկում է, արգելում նրանց սահմանն անցնել: Ասլանն ուզում է կռվել նրանց հետ, բայց Սիմիզարն ասում է.

– Նախ՝ էս իմ հոր զորքն է, երկրորդն էլ՝ բացի սրանից էլի էսպես վեց սար կա: Ամեն տեղ որ կռվով անցնենք, ու քեզ մի փորձանք պատահի, էլ ես առանց քեզ կենդանի մնամ՝ ինչի՞ս է պետք:

Պառավն էլ չի համաձայնում կռվելու մտքին, համոզում է, տասը զինվորին հետ ուղարկում՝ ասելով.

– Թե որ դուք չեք ուզում, մենք հետ կգնանք, ձեր հողը չենք մտնի:

Նանեն քանդում է իր գլխաշորը, փռում գետնին, ասում.

– Դուք ձիուն նստեք, ձին կանգնի շալի վրա, շալը ձեզ կթռցնի, վերևով կտանի, ես էլ թաշկինակիս կնստեմ, կգնանք խնամի թագավորի երկիրը:

Ձին լեզու է առնում, ասում.

– Չէ՛, մե՛րս, դու ու խանումս նստեք շալին, Ասլան աղաս էլ՝ իմ թամբին: Աստված ինձ էլ թռնելու թևեր տվեց, կթռնեմ:

Էսպես ասում է ու թևերը բացում:

Թռչում, գալիս են թագավորի քաղաքի մեջտեղում իջնում: Ասլանն ուզում է գնալ թագավորի պալատ, տեղեկացնել, որ Սիմիզարն էստեղ է, բայց աղջիկը թույլ չի տալիս, ասում է.

– Մեր նազիր-վեզիրի տղերքն էլ ինձ վրա աչք ունեին: Հենց իմանան, որ դու ես ինձ բերել, քեզ կվնասեն:

Պառավն ասում է.

– Դուք հանգիստ նստեք ձեր տեղը, ես կգնամ ու ի՞նչ որ պետք է՝ կանեմ:

Սիմիզարը նրան է տալիս իր մոր՝ ոսկե շրջանակի մեջ դրված փոքրիկ նկարն ու ասում.

– Թե քեզ չհավատան, էս նկարը ցույց տուր, մեկ էլ երգի՛ր մորս սիրած էս երգը, որ ես էի երգում. «Իմ հեր զորեղ ամենքեն, իմ

մերն անուշ ամենքեն»: Թե որ քեզ ներս չթողնեն, մորս պատուհանի տակ էս երգես՝ հերիք է:

Պառավը գնում, նստում է թագավորի խնամաքարին: Պալատից մի մարդ է գալիս, հարցնում.

– Ի՞նչ ես ուզում, պառա́վ:

Ասում է.

– Եկել եմ թագավորի աղջկան իմ տղի համար ուզեմ:

– Ախր թագավորն աղջիկ չունի:

– Ունի՛, ունի՛,– ասում է,– դուք ինձ տարեք կա́մ թագավորի, կա́մ իր կնոջ մոտ:

Թագավորին իմաց են տալիս: Ասում է.

– Ո՛վ գիտի, դարդից խելքը թռցրած կնիկ է:

Պառավը տեսնում է, որ իրեն ներս չեն թողնում, ձայնը գլուխն է գցում ու երգում աղջկա սովորեցրած երգը՝«Իմ հեր զորեղ ամենքեն, իմ մերն անուշ ամենքեն»: Երգը հասնում է թագավորի կնոջը: Նա մարդ է ուղարկում, որ իր մոտ բերեն երգողին: Պառավին ներս են բերում:

– Դու ինչի՞ ես նստել խնամաքարին,– հարցնում է թագավորի կինը:

Պառավը պատասխանում է.

– Եկել եմ աղջկադ ուզեմ տղիս համար:

– Պառա́վ, ես հիմա աղջիկ չունեմ: Էն երգն էլ, որ դու երգում էիր, իմ անբախտ աղջկա երգած ու իմ էլ սիրած երգն էր: Դու որտեղի՞ց գիտես էդ երգը:

– Քո աղջիկն է ինձ սովորեցրել՝ Սիմիզարը: Էս նկարն էլ ինքն է տվել,– ասում է պառավն ու պատմում՝ ինչ որ գիտեր: Թագավորի կնոջ ուշքը ուրախությունից գնում է: Հավաքվում են ծառաները, թագավորին լուրը հայտնում: Թագավորի կնոջն ուշքի են բերում ու կառքերով գնում, Սիմիզարին ու Ասլանին բերում պալատ:

Զարզանդ թագավորն ու իր կինը շատ են ուրախանում, սկսում են Ասլանին ու Սիմիզարին պսակելու պատրաստություն տեսնել:

Մինչ նրանք պատրաստվում են, ձիապանները գալիս, Ասլանին ասում են.

– Էս էրկու օր է՝ մի մոծակ է հայտնվել, ձիուն հանգիստ չի տալիս:

Ասլանն ուզում է գնալ տեսնել, բայց պառավը թույլ չի տալիս, ասում է՝ ես կգնամ:

Պառավը օշինդրի երկու ճյուղ ձեռքին մտնում է ձիու գոմը, ճյուղերը վառում, թե չէ՝ մոծակն անհետանում է:

Պառավին լավ սենյակ ու ծառաներ էին տվել, բոլորը նրան հարգում ու պատվում էին, բայց էդ գիշեր ծեր կինն իր սենյակից դուրս է գալիս ու, երբ բոլորը քնած էին, Ասլանի սենյակի դուռը բացում, մտնում է ներս, լամպերը հանգցնում է, եռաճյուղ մի երկաթ ձեռքին՝ նստում ու սկսում է ինչ-որ բանի սպասել: Կեսգիշերն անց մեկ էլ մի ֆշշոց է լսվում: Պառավը տեսնում է՝ եկավ էն, ինչին ինքն սպասում էր. մի սև, վիշապի պես օձ սողալով գնում է Ասլանի ու Սիմիզարի մահճակալի կողմը: Նանեն ձեռքի եռաճյուղ երկաթը խրում է օձի գլխի մեջտեղը: Օձը գոռում ու սատկում է: Օձի ձայնից Ասլանն ու Սիմիզարն արթնանում են, պառավը պատմում է նրանց, որ օձը դևի մայրն էր. սկզբում մոծակ էր դարձել, ինքը որ գնաց գոմը, մոծակն էնտեղից փախավ, հիմա էլ, ինչպես տեսնում են, օձ է դարձել, որ տղային ու աղջկան վնասի:

Թագավորն ու իր կինը շատ են ուրախանում, որ Ասլանն ու Սիմիզարը օձից փրկվել են: Նրանք մեծ ծախս են անում, մեծ հրավերք կազմակերպում, յոթ օր ու յոթ գիշեր հարսանիք անում, Սիմիզարին պսակում Ասլանի հետ:

Թագավորը ծերացել էր, իր տեղը Ասլանին է կարգում թագավոր, անունն էլ դնում Ասլան թագավոր:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Անտառի ծուտիկը

Որքա՜ն լավ էր քաղաքից դուրս: Ամառ էր. հաճարի արտերն արդեն դեղնել էին, վարսակը կանաչին էր տալիս, խոտը հնձված էր ու դիզված: Կանաչ մարգագետնում երկար ու կարմիր ոտքերով քայլում էր արագիլը և եգիպտերեն բլբլում: Այդ լեզուն նա սովորել էր մորից: Դաշտերից ու մարգագետիններից այն կողմ փռված էր մի հսկայական անտառ, որի խորքում կային խոր-խոր լճակներ:

Այո՛, շա՜տ լավ էր քաղաքից դուրս:

Բարկ արևի տակ փռված էր մի հին կալվածք՝ շրջապատված խոր-խոր առուներով: Կալվածքի քարե ցանկապատից մինչև ջրի եզերքը կռատուկներ էին աճել և այնքան խոշոր, որ նրանց ամենամեծ տերևի տակ փոքրիկ երեխաները կարող էին կանգնել ամբողջ հասակով: Կռատուկների թավուտը նույնքան խուլ էր ու վայրի, որքան խիտ անտառը, և ահա հենց այդտեղ էլ ձվերի վրա թուխս էր նստել մի բադ: Վաղուց էր նա նստած այդտեղ և արդեն բավական ձանձրացել էր երկար նստելուց, որովհետև քիչ էին

այցելում նրան. մյուս բադերի համար ավելի հաճելի էր լող տալ առվի ջրում, քան թե նստել կռատուկների մեջ ու կղկղալ նրա հետ:

Վերջապես ձվերի կճեպները ճաքեցին: «Ծի՛վ-ծի՛վ» – լսվեց նրանց միջից. այդ ձվերի դեղնուցներն էին կյանք առել, և ճուտիկներն իրենց կտուցները հանեցին կճեպներից:

– Շո՛ւտ, շո՛ւտ,– կռթկռթաց բադը:

Եվ բադիկներն շտապեցին, մի կերպ դուրս պրծան կճեպներից ու սկսեցին իրենց շուրջը նայել, դիտել կռատուկի կանաչ տերևները: Մայրը նրանց չխանգարեց, կանաչ գույնը օգտակար էր աչքերի համար:

– Որքա՜ն մեծ է աշխարհը,– կղկղացին բադիկները:

Դե, պարզ է, հիմա նրանց տեղը շատ ավելի մեծ էր, քան ձվերի մեջ պառկած ժամանակ:

– Դուք կարծում եք, թե ա՛յս է ամբողջ աշխարհը,– ասաց մայրը:– Ո՛չ, աշխարհը շատ ու շատ մեծ է, ձգվում է հեռո՛ւ, այգու այն կողմը, դեպի քահանայի դաշտը, բայց ես այնտեղ երբեք չեմ եղել... Դե, լավ. բոլո՞րդ եք այստեղ:– Եվ նա վեր կացավ:– Ա՛խ, ո՛չ, դեռ բոլորը չեն, ամենամեծ ձուն դեռ տեղն է. ե՞րբ պիտի վերջանա, իսկապես արդեն ձանձրացել եմ:

Եվ նորից նստեց:

– Հը՞, գործերդ ինչպե՞ս են,– նրան այցելելով հարցրեց մի պառավ բադ:

– Ոչի՛նչ, բայց ա՛յ, մի ձու դեռ մնում է,– ասաց երիտասարդ բադը,– որքան ժամանակ է՝ նստած եմ, իսկ սա չի ճաքում: Բայց նայեցեք մյուսներին, ի՞նչ հրաշալի են: Զարմանալիորեն նման են իրենց հորը: Իսկ նա, այն անպիտանը, ոչ մի անգամ չի այցելում ինձ:

– Սպասիր, սպասիր մի ես տեսնեմ՝ այդ ի՞նչ ձու է, որ դեռ չի ճաքել,– ասաց պառավ բադը:– Երևի դա հնդկահավի ձու է: Ինձ

էլ են մի անգամ խաբել: Եվ ինչպես էի տանջվում ես, երբ դուրս եկան հնդկահավի ձագերը: Ախր նրանք սոսկալի վախենում են ջրից, ես կղկղում էի, կանչում, նույնիսկ ջուրն էի հրում նրանց, բայց՝ չէ ու չէ, ջուրը չէին մտնում: Թող մի տեսնեմ այդ ձուն: Այո՛, այո՛, հենց այդպես էլ կա, հնդկահավի ձու է: Թող դրան: Ավելի լավ է գնա մյուսներին լողալ սովորեցրու:

– Չէ, մի քիչ էլ կնստեմ,– ասաց երիտասարդ բադը:– Այսքան նստելուց հետո կարելի է մի քիչ էլ նստել:

– Դու գիտես,– ասաց պառավ բադը ու գնաց:

Վերջապես ճաքեց նաև ամենամեծ ձվի կճեպը: «Ծի՛վ–ծի՛վ», և նրա միջից դուրս եկավ մի խոշոր, տգեղ ճուտիկ, բադը նայեց նրան.

– Ա՜յ քեզ հսկա,– ասաց նա:– Եվ բոլորովին նման չէ մյուսներին: Մի՞թե իսկապես հնդկահավի ճուտ է սա: Բայց ես սրան էլ լող տալ կսովորեցնեմ, թեկուզ ստիպված լինեմ ուժով ջուրը հրել:

Հետևյալ օրը սքանչելի եղանակ էր, կանաչ կռատուկն ամբողջովին ողողվել էր արևի ճառագայթներով: Բադն իր ամբողջ ընտանիքով ուղղվեց դեպի առուն: Չլքմփ, և բադն արդեն ջրի մեջ էր:

– Իմ հետևի՛ց, շո՛ւտ,– կանչեց նա բադիկներին, և նրանք իրար հետևից ջուրը թափվեցին:

Սկզբում ջուրը նրանց ծածկեց, բայց հետո դուրս եկան ջրի երեսը և սկսեցին հիանալի լող տալ: Նրանց թաթերն աշխատում էին եռանդով: Անճոռնի, գորշագույն բադիկն էլ ետ չէր մնում նրանցից:

– Ի՜նչ հնդկահավ,– ասաց բադը:– Տե՛ս, ի՜նչ լավ է թիավարում թաթերով, ինչպես ուղիղ է մնում ջրի երեսին, չէ՛, սա իմ հարազատ զավակն է: Եվ ամենևին էլ տգեղ չէ, եթե լավ նայես նրան: Դե՛, շո՛ւտ, շո՛ւտ, իմ հետևից: Հիմա ես ձեզ հասարակության մեջ կտանեմ,

գնում ենք թռչնանոց: Բայց ինձանից չհեռանաք, որպեսզի որևէ մեկը ձեզ չտրորի, և զգուշացեք կատվից:

Շուտով նրանք հասան թռչնանոց: Տեր Աստված, ինչ աղմուկ ու դժժոց էր այնտեղ: Երկու ընտանիք կռվում էին մի օձաձկան գլխի համար, բայց, վերջ ի վերջո, այդ գլխիկը բաժին ընկավ կատվին:

– Ա՛յ թե ինչպես է աշխարհի բանը,– ասաց բադը և լիզեց իր կտուցը, չէ՞ որ նա էլ էր ուզում օձաձկան գլխի համը տեսնել:– Դե՛, դե՛, թաթիկներդ շարժեք,– ասաց նա բադիկներին:– Կղ-կղացեք և գլուխ տվեք, այ, այն պառավ բադին: Նա այստեղ ամենաանվանի բադն է. իսպանական ցեղից է, դրա համար էլ այդպես գեր է: Տեսնո՞ւմ եք նրա ոտքին կապած կարմիր պաճիճը: Որքա՞ն գեղեցիկ է: Դա ամենաբարձր դիրքի նշան է, որ երբևիցե բադը կարող է ստանալ: Դա նշանակում է, որ տերերը նրանից բաժանվել չեն ուզում, այդ պաճիճով նրան ճանաչում են և՛ մարդիկ, և՛ կենդանիները:

Դե՛, շո՛ւտ: Այդպես թաթերդ իրար մի՛ դիպցրեք: Բարեկիրթ բադիկը պետք է թաթերը հեռու պահի իրարից և թեքի դրսի կողմի վրա, ինչպես հայրիկն ու մայրիկն են անում: Ա՛յ, այդպե՛ս: Դե՛, գլուխ տվեք և կղկղացեք:

Բադիկները գլուխ տվին ու կղկղացին, բայց մյուս բադերը նայեցին նրանց ու բարձրաձայն ասացին.

– Ահա ձեզ էլի մի ամբողջ ոհմակ: Կարծես մենք քիչ էինք այստեղ: Իսկ այն մեկը ի՞նչ այլանդակն է. նրան արդեն տանել չի կարելի:

Եվ բադերից մեկն իսկույն մոտ վազեց ու կտցեց նրա ծոծրակը:

– Հանգիստ թողեք նրան,– ասաց մայր բադը:– Ի՞նչ եք ուզում նրանից: Նա ձեզ ի՞նչ է արել:

– Ոչինչ չի արել, բայց շատ է մեծ ու մի տեսակ էլ տարօրինակ,– ասաց կռվարար բադը:– Հարկավոր է նրան լավ դաս տալ:

– Հիանալի զավակներ ունես դու,– ասաց կարմիր պաճիճավոր պառավ բադը:– Բոլորն էլ շատ սիրուն են, բացի մեկից... Այդ մեկը անհաջող է: Լավ կլինի վերափոխել նրան:

– Ոչ մի կերպ չի կարելի, ձերդ ողորմածություն,– պատասխանեց մայր բադը:– Ճիշտ է, նա գեղեցիկ չէ, բայց բարի սիրտ ունի և լողում է մյուսներից ոչ վատ. գուցե և նույնիսկ ավելի լավ: Ես կարծում եմ՝ նա մեծանա կգեղեցկանա կամ թե ժամանակի ընթացքում կփոքրանա: Նա մի քիչ ավելի մնաց ձվի մեջ, դրա համար էլ այնքան հաջողակ չէ:– Եվ նա իր կտուցը քսեց մեծ բադի փետուրներին:– Բացի դրանից, նա արու է, իսկ արուին գեղեցկությունն այնքան էլ հարկավոր չէ: Կարծում եմ՝ կմեծանա, իր համար ճանապարհ կհարթի:

– Մյուս բադիկները շատ լավն են, շատ,– ասաց պառավ բադը:– Դե, եղեք ինչպես ձեր տանը, իսկ եթե օձաձկան գլուխ գտնեք, կարող եք բերել ինձ:

Եվ ահա, նրանք սկսեցին ապրել ինչպես իրենց տանը: Միայն այն խեղճ բադիկին, որն ամենից ուշ էր ձվից դուրս եկել ու այնքան անճոռնի էր, կտցահարում, հրմշտում ու ծաղրում էին բոլորը՝ և՛ բադերը, և՛ հավերը:

– Նա չափից ավելի մեծ է,– ասում էին բոլորը:

Իսկ արու հնդկահավը, որն ի ծնե ոտքերին խթաններ ուներ և դրա համար իրեն կայսր էր երևակայում, փքվեց, ուռեց և բոլոր առագաստները բաց արած նավի պես հարձակվեց բադիկի վրա, զայրացած բլբլացրեց, և նրա կատարը արյունով լցվեց: Խեղճ բադիկն ուղղակի չգիտեր՝ ինչ անի, ինչպես վարվի: Մի՞թե հենց ինքը պիտի ծնվեր այդպես անճոռնի և ամբողջ թռչնանոցի ծաղրի առարկան դառնար:

Առաջին օրն այդպես անցավ, հետո սկսվեց ավելի վատը, բոլորը հալածում էին խեղճին, նույնիսկ եղբայրներն ու քույրերը բարկացած ասում էին նրան. «Կատուն տանի քեզ, գարշելի

այլանդակ»,– իսկ մայրն ավելացնում էր. «Չքվես դու աչքիս առաջից»: Բադերը կտցահարում էին նրան, հավերը՝ կսմթում, իսկ այն աղջիկը, որ թռչուններին կեր էր տալիս, ոտքով հրում էր մի կողմ:

Եվ ահա, բադիկը վազելով բակն անցավ ու թռավ ցանկապատի այն կողմը: Փոքրիկ թռչունները վախեցած փախան թփերի միջից:

«Նրանք ինձնից վախեցան, այնքա՜ն այլանդակ եմ»,– մտածեց բադիկը և աչքերը փակած առաջ վազեց, մինչև որ հասավ այն ճահճին, որտեղ վայրի բադեր էին ապրում: Նա, հոգնած ու տխուր, ամբողջ գիշերը մնաց նստած:

Առավոտյան վայրի բադերը դուրս թռան իրենց բներից և տեսան նորեկին:

– Ո՞վ ես դու,– հարցրին նրանք,– բայց բադիկը միայն շուռումուռ էր գալիս, բոլորին գլուխ տալիս՝ ինչպես կարող էր:

– Ա՜յ քեզ այլանդակ,– ասացին վայրի բադերը:– Ասենք, դա մե՛ր ինչ գործն է: Միայն թե, տես, մտքովդ չանցնի խառնվել մեզ:

Խեղճ բադիկ, նա իսկի կմտածեր ամուսնության մասին: Միայն թե իրեն թույլ տային նստել այդտեղ՝ եղեգնուտում և խմել ճահճի ջուրը:

Երկու օր նա անցկացրեց ճահճում, երրորդ օրը ներկայացան երկու վայրի սագ: Նրանք նոր էին ձվից դուրս եկել, դրա համար էլ շատ ամբարտավան էին:

– Լսի՛ր, բարեկամ,– ասացին նրանք:– Դու այնքան անճոռնի ես, որ, ճիշտն ասած, նույնիսկ դուր ես գալիս մեզ: Կուզե՞ս թռչել մեզ հետ: Դու ազատ թռչուն կլինես: Այստեղից ոչ հեռու, մյուս ճահճում ապրում են շատ ու շատ գեղեցիկ վայրի սագ-օրիորդներ: Նրանք կարողանում են ասել՝ «ռա՛պ, ռա՛պ»: Դու թեպետ անճոռնի ես, բայց ո՛վ գիտե, մեկ էլ տեսար՝ հաջողություն ունեցար նրանց մոտ:

«Դո՛ւմ-դո՛ւմ»– հանկարծ հնչեց ճահճի վրա, և երկու սագն էլ անշնչացած ընկան եղեգների մեջ: Ջուրը կարմրեց նրանց արյունից: «Դո՛ւմդո՛ւմ»– որոտաց կրկին, և եղեգնուտից վեր բարձրացավ վայրի սագերի մի ամբողջ երամ: Կրակոցներն ուժեղացան: Որսորդները ճահիճը շրջապատել էին բոլոր կողմերից. նրանցից ոմանք թաքնվել էին ճահճի գլխին կախված ծառերի ճյուղերի մեջ: Կապուտակ ծուխը ամպի պես փաթաթվում էր ծառերին, ապա փռվում ջրի երեսին: Ճահճի մեջ չլըմփացնում էին և որսորդական շները, որոնք առաջ շարժվելով՝ եղեգները դես ու դեն էին ճոճում: Խեղճ բադիկը սարսափից ո՛չ կենդանի էր, ո՛չ մեռած և հենց որ ուզեց գլուխը թևի տակ թաքցնել, մեկ էլ տեսավ՝ իր առաջ ցցվեց որսորդական շունը՝ լեզուն հանած, փայլատակող չար աչքերով: Նա դունչը մոտեցրեց բադիկին, բացեց սուր-սուր ատամները, բայց չլը՛մփ-չլըմփ վազեց առաջ:

– Փա՛ռք Աստծո,– թեթևացած շունչ քաշեց բադիկը,– փա՛ռք Աստծո, ես ինչքա՛ն անճոռնի եմ, որ նույնիսկ շունը զզվեց ինձնից ու չկծեց:

Եվ նա կուչ եկավ եղեգների մեջ:

Նրա գլխավերևում շարունակ կրակոցներ էին լսվում և մանրագնդակներ թռչում:

Կրակոցը դադարեց միայն երեկոյան դեմ, իսկ բադիկը դեռ երկար ժամանակ վախենում էր շարժվել: Էլի մի քանի ժամ անցավ, և վերջապես նա սիրտ արեց վեր կենալ, շուրջը նայել և փախչել հեռու դաշտերի ու մարգագետինների միջով: Այնքան ուժեղ քամի էր փչում, որ բադիկը հազիվ էր կարողանում շարժվել:

Գիշերը նա հասավ մի խղճուկ խրճիթի: Այդ խրճիթն արդեն այնքան էր խարխլվել, որ պատրաստ էր ընկնելու, բայց չգիտեր՝ որ կողքի վրա ընկնի, դրա համար էլ կանգուն էր մնացել: Քամին քշում էր բադիկին, և նա ստիպված էր պոչը հենել գետնին:

Քամին ավելի ու ավելի էր սաստկանում: Ի՞նչ աներ բադիկը:

Բարեբախտաբար, նա նկատեց, որ խրճիթի դուռը մի կողմից դուրս է ընկել և թեք կախված է: Այդ անցքի միջով կարելի էր հեշտությամբ մտնել խրճիթը: Եվ նա այդպես էլ արեց:

Խրճիթում ապրում էր մի պառավ՝ իր կատվի ու հավի հետ: Կատվին նա «Որդյակ» էր անվանում: Կատուն կարողանում էր մեջքը ճկել, մռլտալ և նույնիսկ կայծեր էր արձակում, երբ ձեռքը նրա մեջքին էին քսում մազերի հակառակ ուղղությամբ: Հավը մանրիկ, կարճլիկ ոտքեր ուներ, և անունն էլ դրել էին «Կարճոտիկ»: Նա շատ ջանասիրաբար ձու էր ածում, և պառավը նրան սիրում էր իր աղջկա պես:

Առավոտյան նրանք նորեկին նկատեցին: Կատուն սկսեց մռմռալ, իսկ հավը՝ կչկչալ:

– Այդ ի՞նչ է պատահել,– հարցրեց պառավը, շուրջը նայեց և նկատեց բադիկին, բայց որովհետև աչքերը լավ չէին տեսնում, նրան գեր բադի տեղ դրեց և մտածեց, թե երևի տիրոջ տունը կորցրել է:

– Ա՛յ քեզ լավ բան,– ինքն իրեն ասաց պառավը:– Հիմա ես բադի ձվեր էլ կունենամ, եթե միայն սա որձ բադ չէ: Սպասենք, տեսնենք:

Եվ բադիկին ընդունեցին իրենց խնամքի տակ: Բայց անցավ մի երեք շաբաթ, իսկ ձու չկար ու չկար: Այդ տան մեջ կատուն տեր էր, հավը՝ տիրուհի, և նրանք միշտ ասում էին. «Մենք ենք, որ կանք»: Նրանք իրենց համարում էին աշխարհի կեսը, այն էլ՝ լավ կեսը: Իսկ բադիկին թվում էր, թե դրա մասին կարելի է ուրիշ կարծիք ունենալ: Հավը զայրանում էր դրա համար:

– Դու ձու ածել գիտե՞ս,– հարցրեց նա բադիկին:

– Ոչ:

– Դե ուրեմն լեզուդ քեզ քաշած պահիր: Իսկ կատուն հարցրեց.

– Դու կարո՞ղ ես մեջքդ ճկել, մռլտալ ու կայծեր արձակել:

– Ոչ:

– Դե ուրեմն քո կարծիքը քեզ պահիր, երբ խոսում են քեզնից խելոքները:

Եվ բադիկը փքված նստեց անկյունում: Հանկարծ նա հիշեց թարմ օդն ու արևը, և սիրտը լողալ ուզեց: Նա չդիմացավ և իր այդ ցանկությունը հայտնեց հավին:

– Ինչ է պատահել քեզ,– հարցրեց հավը:– Պարապ-սարապ թրև ես գալիս, դրա համար էլ այդպիսի ցնորակալ մտքեր են գալիս գլուխդ: Ա՛յ, ձու ածիր կամ մռլտա, այն ժամանակ այդպիսի մտքեր չեն գա գլուխդ:

– Ա՜խ, ջրում լող տալը որքա՜ն դուրեկան բան է,– ասաց բադիկը:– Իսկ ինչպիսի՜ բավականություն է գլուխը սուզել ջրի խորքը...

– Լա՜վ բավականություն է,– ասաց հավը:– Դու բոլորովին ցնդել ես: Հարցրու կատվին, իմ ճանաչածների մեջ նա ամենախելոքն է. հարցրու, նրան դո՞ւր է գալիս ջրի մեջ լող տալը կամ սուզվելը: Էլ չեմ խոսում իմ մասին: Վերջապես հարցրու մեր տեր պառավին, նրանից խելոքը հո աշխարհում չկա ու չկա: Քո կարծիքով նա՞ էլ կուզենա ջրում լող տալ կամ գլուխը սուզել ջրի մեջ:

– Դուք ինձ չեք հասկանում,– ասաց բադիկը:

– Եթե մենք չենք հասկանում, էլ ո՞վ կհասկանա քեզ: Ի՞նչ է, դու ուզում ես կատվից ու մեր տիրուհուց ավելի խելո՞ք լինել, էլ չեմ խոսում իմ մասին: Հիմար բաներ մի՛ դուրս տուր, այլ ավելի լավ է շնորհակալ եղիր Արարչից այն ամենի համար, ինչ քեզ տվել են: Քեզ օթևան են տվել, տաքացրել են, քեզ շրջապատում է այնպիսի հասարակություն, որից կարող ես մի բան սովորել, բայց դու դատարկագլուխ ես, և քեզ հետ խոսել անգամ չարժե: Հավատա՛ ինձ, ես քո լավն եմ ուզում, դրա համար էլ այսպիսի խոսքեր եմ ասում քեզ, իսկական բարեկամը միշտ այսպես կասի: Դե, ուրեմն աշխատիր ձու ածել կամ թե սովորիր մռլտալ ու կայծեր արձակել:

– Ես կարծում եմ՝ ինձ համար ավելի լավ կլինի գնամ այստեղից՝ ուր աչքս կտրի,– ասաց բադիկը:

– Բարի՛ ճանապարհ,– ասաց հավը:

Եվ բադիկը գնաց: Նա լողում էր և գլուխը սուզում ջրի մեջ, բայց բոլոր կենդանիները առաջվա պես արհամարհում էին նրան իր այլանդակության համար:

Աշունը եկավ, ծառերի տերևները դեղնեցին ու գորշացան: Քամին պոկում ու պտտեցնում իր նրանց: Վերը երկինքը ցրտեց, ծանր ամպեր կախվեցին, որոնցից սկսեց մանր եղյամ մաղել: Ցանկապատին նստած ագռավը ցրտից կռռում էր ամբողջ կոկորդով՝ «կռա-կռա՜»: Հենց միայն այս ցրտի մասին մտածելով կարելի էր սառչել: Վատ օրեր էին գալիս խեղճ բադիկի համար:

Մի անգամ երեկոյան դեմ, երբ արևը դեռ պայծառ փայլում էր երկնքում, թփերի հետևից բարձրացավ խոշոր, հրաշալի թռչունների մի երամ: Բադիկն իր օրում այդպիսի գեղեցիկ թռչուններ չէր տեսել, նրանք բոլորն էլ ճերմակ էին ձյունի պես, երկար, ճկուն վզերով: Դրանք կարապներ էին: Նրանք ինչ-որ տարօրինակ ճիչ արձակեցին, թափահարեցին իրենց փառահեղ թևերը և ցուրտ մարգագետիններից թռան դեպի տաք երկրներ, դեպի կապուտակ լճերը: Նրանք բարձրացան վերև, շատ վերև, և խեղճ բադիկին մի ինչ-որ զարմանալի հուզմունք համակեց: Նա հոլի պես պտույտ եկավ ջրի մեջ, ձգեց պարանոցը և նույնպիսի բարձր ու տարօրինակ ճիչ արձակեց, որից ինքն էլ վախեցավ: Հրաշագեղ թռչունները դուրս չէին գալիս նրա գլխից, և երբ նրանք բոլորովին անհետացան, նա սուզվեց ջրի հատակը, նորից դուրս եկավ այնտեղից. կարծես ինքն իրեն կորցրել էր: Բադիկը չգիտեր, թե ինչպես են կոչում այդ թռչուններին, ուր թռան նրանք, բայց սիրեց նրանց, ինչպես ոչ ոքի չէր սիրել մինչև այդ: Նա չէր

նախանձում նրանց գեղեցկությանը, նրա մտքով էլ չէր անցնի նրանց նման լինել, նա ուրախ կլիներ, եթե գոնե բադերը իրեն չվռնդեին իրենց միջից: Խեղճ անճոռնի բադիկ:

Իսկ ձմեռը ցուրտ էր, շատ ցուրտ: Բադիկն ստիպված էր անդադար լող տալ ջրի մեջ, որպեսզի ջուրը բոլորովին չսառչեր, բայց օրեցօր սառույցից ազատ տարածությունը փոքրանում էր: Այնպիսի սառնամանիք էր անում, որ ջրի սառցե կեղևը ճաքում էր: Բադիկն անդադրում շարժում էր իր թաթերը, բայց վերջ ի վերջո ուժասպառ եղավ, կանգ առավ ու սառեց:

Վաղ առավոտյան մոտիկից անցնող մի գյուղացի տեսավ սառած բադիկին, սառույցը կոտրեց իր փայտե ոտնամանով և թռչունին տարավ տուն, տվեց կնոջը: Բադիկին տաքացրին, նա ուշքի եկավ:

Բայց ահա երեխաները մի անգամ սկսեցին խաղալ բադիկի հետ, իսկ նա կարծեց, թե ուզում են չարչարել իրեն և վախից թևերը թափահարեց ու ընկավ կաթով լիքը ամանի մեջ, կաթը թափվեց: Կինը ճչաց ու ձեռքերը թափահարեց: Այդ ժամանակ բադիկը նետվեց յուղի ամանի մեջ, իսկ այնտեղից՝ ալյուրի տակառի մեջ: Տեր Աստված, ինչի՞ էր նման նա: Կինը ճչում էր և ունելին առած՝ վազում հետևից, երեխաներն իրար տրորելով վազում էին ու հռհռում, ճվճվում: Լավ էր, որ դուռը կիսաբաց էր, և բադիկը դուրս փախավ, նետվեց դեպի թփերը, նոր նստած ձյունի մեջ և երկար-երկար պառկեց համարյա անզգա:

Շատ տխուր կլիներ նկարագրել այն բոլոր փորձանքները, որոնց մեջ ընկավ բադիկը այդ ամբողջ դաժան ձմեռվա ընթացքում: Իսկ երբ արևը նորից իր ճառագայթներով տաքացրեց երկիրը, բադիկը պառկած էր ճահճում, եղեգների մեջ: Ահա արտույտներն էլ երգել սկսեցին: Գարունը բացվեց:

Բադիկը թևերը թափահարեց ու թռավ: Այժմ նրա թևերը խշշում էին և շատ ավելի ուժեղ էին առաջվանից: Դեռ ուշքի

չեկած՝ նա արդեն մի այգու մեջ էր: Խնձորենիներն ամբողջովին փաթաթված էին ծաղկի մեջ, բուրումնավետ յասամանն իր երկար կանաչ ճյուղերը թեքել էր ոլորապտույտ առվի վրա:

Ա՜խ, որքան լավ էր այդտեղ, ինչպե՜ս էր գարուն բուրում: Հանկարծ եղեգնուտի թավուտից դուրս լողացին երեք սքանչելի կարապներ: Նրանք այնպես թեթև ու սահուն էին լողում, որ կարծես սահում էին ջրի վրայով: Բադիկը ճանաչեց գեղեցիկ թռչուններին, և մի ինչ-որ տարօրինակ թախիծ համակեց նրան:

«Թռչեմ ես այս արքայական թռչունների մոտ: Գուցե և նրանք ինձ սպանեն իմ հանդգնության համար, որ ես՝ այսպես այլանդակս, համարձակվել եմ մոտենալ իրենց: Բայց թող այդպես լինի: Ավելի լավ է՝ նրանք ինձ սպանեն, քան թե տանեմ բադերի ու հավերի կսմթոցը, թռչնանոցի հրմշտոցը և ձմեռվա ցուրտն ու քաղցը»:

Եվ նա ջուրը նետվեց ու լողաց դեպի գեղեցիկ կարապները, որոնք նրան տեսնելով՝ նույնպես սլացան նրա կողմը:

– Սպանեք ինձ,– ասաց թշվառը և մահվան սպասելով՝ գլուխը կախեց:

Բայց նա ի՛նչ տեսավ հայելանման վճիտ ջրի մեջ: Իր սեփական արտացոլումը: Բայց ինքն արդեն այլևս անճոռնի, գորշ-մոխրագույն թռչուն չէր, այլ՝ կարապ:

Դժբախտություն չէ լույս աշխարհ գալ բադի բնում, եթե դուրս ես եկել կարապի ձվից: Այժմ նա ուրախ էր, որ այդքան վիշտ ու տառապանք կրելուց հետո հիմա ավելի լավ կարող է գնահատել իր երջանկությունը և իրեն շրջապատող ամբողջ հոյակապ աշխարհը: Մեծ կարապները լող էին տալիս նրա շուրջը և իրենց կտուցով զարդարում նրա փետուրները:

Վազելով այգի եկան փոքրիկ երեխաները: Նրանք սկսեցին հատիկներ ու հացի փշրանքներ նետել կարապներին, իսկ նրանցից ամենափոքրը ձայն տվեց.

– Նո՛ր, նո՛ր...

Եվ մյուսներն էլ վրա բերին. «Այո, նո՛ր, նո՛ր», և ծափ զարկեցին, ուրախությունից սկսեցին պարել: Հետո վազեցին իրենց մայրիկի ու հայրիկի մոտ և նրանց հետ գալով՝ նորից սկսեցին հացի ու գաթայի փշրանքներ նետել ջուրը: Որքա՜ն ջահել, որքա՜ն հրաշալի էր նա:

Եվ ծեր կարապներն էլ գլուխ խոնարհեցին նրա առաջ:

Իսկ նա բոլորովին շփոթվեց և, ինքն էլ չիմանալով ինչու, գլուխը թաքցրեց թևի տակ: Նա անսահման երջանիկ էր, բայց ամենևին չէր գոռոզանում, բարի սիրտը գոռոզություն չգիտի: Նա մտաբերում էր այն ժամանակը, երբ բոլորը արհամարհում ու հալածում էին իրեն, իսկ այժմ բոլորն ասում են, որ ինքը չքնաղագեղն է գեղեցիկների մեջ: Յասամանը նրա կողմն էր թեքում իր բուրումնավետ ճյուղերը, արևը շոյում էր նրան ու ջերմացնում... Եվ ահա նրա թևերը խշշացին, նրբագեղ պարանոցը ձգվեց և կրծքից դուրս թռավ ցնծության ճիչը.

– Օ՜, կարո՞ղ էի ես երազել այսպիսի երջանկություն, երբ դեռ անճոռնի բադիկ էի:

Բովանդակություն

Ոսկի քաղաքը **3**
(հնդկական հեքիաթ, թարգմ. և փոխադր.՝ Հովի. Թումանյան)
Խոզարածը **15**
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Վուշը **31**
(Հանս Քրիստիան Անդերսեն, թարգմ.՝ Հ. Հարությունյան)
Հայրենի տան մեխը **38**
(շվեդական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Թ. Ահարոնյան)
Ճամփորդները **46**
(Հովի. Թումանյան)
Շահ Թահմասպի հեքիաթը **49**
(պարսկական ժողովրդական հեքիաթ, թարգմ.՝ Գ. Ասատրյան)
Արծաթե դրամը **58**
(Հանս Քրիստիան Անդերսեն, թարգմ.՝ Հ. Հարությունյան)
Զարզանդ թագավորի աղջիկը **65**
(հայ ժողովրդական հեքիաթ, մշակումը՝ Հ. Մկրտչյանի)
Անճոռնի ճուտիկը **80**
(Հանս Քրիստիան Անդերսեն, թարգմ.՝ Հ. Մկրտչյան)

Կազմող՝
Նազելի Կարապետյան

Հրատարակչության խմբագիր՝
Գալյա Հովհաննիսյան

Նկարազարդումը՝
Լուիզա Գալստյանի

Համակարգչային ձևավորումը՝
Արաբո Սարգսյանի

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
EDIT PRINT
Publishing House